



**ԼԵՈՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԳԵՐԱՏԵՍՉԱԿԱՆ ՆՈՐՄԱՏԻՎ ԱԿՏԵՐԻ  
ՏԵՂԵԿԱԳԻՐ**

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՏԱՍՆԵՐԿՈՒԵՐՈՐԴ ՏԱՐԻ N 04(168) «27» մարտի 2019թ.

**Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն**

<b>ՀԻՆԳԵՐՈՐԴ ԲԱԺԻՆ</b>	
	<b>ԼՂՀ ՆԱԽԱՐԱՐՆԵՐԻ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌՈՆԹԵՐ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՀՐԱՄԱՆՆԵՐԸ</b>
17	«Անհատույց պետական ֆինանսական աջակցություն տրամադրելու մասին պայմանագրի և ծավալաթերթ-նախահաշվի ձևերը սահմանելու մասին» ԱՀ աշխատանքի, սոցիալական հարցերի և վերաբնակեցման նախարարի N 1-Ն հրամանը
18	«Անձին առանձին սենյակի կամ լրացուցիչ բնակելի մակերեսի իրավունք վերապահող հիվանդությունների ցանկը հաստատելու մասին» ԱՀ առողջապահության նախարարի N 44-Ն հրամանը
19	«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության արդարադատության նախարարի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ 98-Ն հրամանում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ԱՀ արդարադատության նախարարի N 22-Ն հրամանը
20	«Փոստային վճարման պետական նշանի նմուշները սահմանելու և գործողության մեջ դնելու մասին» ԱՀ էկոնոմիկայի և արտադրական ենթակառուցվածքների նախարարի N 2-Ն հրամանը
	<b>ՀԱՏՈՒԿ ԲԱԺԻՆ</b>
	Արցախի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի կողմից լիցենզիաներ տրամադրելու մասին որոշումների պատճենները
	ԱՀ առողջապահության նախարարի կողմից լիցենզիաներ տրամադրելու և տրված լիցենզիաներն ուժը կորցրած ճանաչելու մասին հրամանների պատճենները
	ԱՀ գյուղատնտեսության նախարարի կողմից լիցենզիա տրամադրելու մասին հրամանի պատճենը
	Արցախի Հանրապետության էկոնոմիկայի և արտադրական ենթակառուցվածքների նախարարության կողմից փետրվար ամսում տրամադրված, դադարեցված և կասեցված լիցենզիա-

	ների մասին տեղեկություններ	
	ԱՀ քաղաքաշինության նախարարության կողմից հունվար և փետրվար ամիսների ընթացքում տրամադրված, դադարեցված և կասեցված լիցենզիաների մասին տեղեկություններ	

Գրանցված է  
Արցախի Հանրապետության  
արդարադատության նախարարության  
կողմից 2019 թվականի մարտի 5-ին  
պետական գրանցման համարը 1081917

**ԱՐՑԱՒԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ, ՍՈՑԻԱԼԱԿԱՆ  
ՀԱՐՑԵՐԻ ԵՎ ՎԵՐԱԲՆԱԿԵՑՄԱՆ ՆԱԽԱՐԱՐ**

**ՀՐԱՄԱՆ**

«20» փետրվարի 2019 թվականի

N 1-Ն

ք. Ստեփանակերտ

**ԱՆՀԱՏՈՒՅՑ ՊԵՏԱԿԱՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՍՊՈՐՏԼՈՒ  
ՄԱՍԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԵՎ ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇՎԻ  
ՁԵՎԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Արցախի Հանրապետության կառավարության 2019 թվականի փետր-  
վարի 8-ի N 50-Ն որոշման 4-րդ կետի 1-ին ենթակետին համապատասխան.

**ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ**

1. Սահմանել՝

- 1) անհատույց պետական ֆինանսական աջակցություն տրամադրելու  
մասին պայմանագրի ձևը՝ համաձայն N 1 հավելվածի.
- 2) ծավալաթերթ-նախահաշվի ձևը՝ համաձայն N 2 հավելվածի:

**ՆԱԽԱՐԱՐ**

**Ս. ԱՎԱՆԵՍՅԱՆ**

**ՊԱՅՄԱՆԱԳԻՐ**  
**ԱՆՀԱՏՈՒՅՑ ՊԵՏԱԿԱՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅՈՒՆ**  
**ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

« \_\_\_\_\_ » \_\_\_\_\_ 20 թ.  
(կնքման վայրը)

Արցախի Հանրապետության աշխատանքի, սոցիալական հարցերի և վերաբնակեցման նախարարությունը (այսուհետ՝ նախարարություն)՝ ի դեմս նախարարության աշխատակազմի ղեկավար \_\_\_\_\_-ի, որը  
(անունը, ազգանունը)

գործում է նախարարության կանոնադրության հիման վրա մի կողմից և  
(քաղաքացու անունը, ազգանունը, հայրանունը, հասցեն, անձը հաստատող փաստաթղթի սերիան, համարը, տրման օրը, ամիսը, տարին)

(այսուհետ՝ Շահառու) մյուս կողմից, (բոլորը համատեղ հիշատակման դեպքում այսուհետ՝ Կողմեր), հիմք ընդունելով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2015 թվականի հունիսի 8-ի N 353-Ն որոշումը, կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր) հետևյալի մասին.

**I. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌՈՐԿԱՆ**

1. Պայմանագրով Նախարարությունը Շահառուին բնակելի տան կառուցման նպատակով տրամադրում է անհատույց պետական ֆինանսական աջակցություն՝ << դրամի չափով, իսկ  
(գումարը նշել թվերով և տառերով)

Շահառուն պարտավորվում է տրամադրված գումարն օգտագործել Պայմանագրով սահմանված նպատակով:

**II. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

2. Նախարարությունն իրավունք ունի.

1) իրականացնել ստուգումներ և հետևել Շահառուի կողմից կառուցվող բնակելի տան շինարարական աշխատանքների ընթացքին.

2) Շահառուի կողմից ներկայացված տեղեկություններում անարժանահավատ տվյալներ հայտնաբերելու կամ Պայմանագրի պահանջները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում վաղաժամկետ լուծել Պայմանագիրը:

3. Նախարարությունը պարտավոր է.

1) Պայմանագիրը կնքելուց հետո Շահառուի բանկային հաշվի համարին փոխանցել Պայմանագրի 1-ին կետում նշված գումարը.

2) Պայմանագրի 1-ին կետում նշված գումարի նպատակային օգտագործման նկատմամբ իրականացնել վերահսկողություն.

3) Պայմանագրի 2-րդ կետի 2-րդ ենթակետում նշված հիմքով Պայմանագիրը վաղաժամկետ լուծելու դեպքում երկու աշխատանքային օրվա ընթացքում պատշաճ կերպով գրավոր տեղեկացնել Շահառուին՝ նշելով դրանից բխող հետագա պահանջների կատարումը:

4. Շահառուն իրավունք ունի իր դիմումի համաձայն վաղաժամկետ լուծել Պայմանագիրը:

5. Շահառուն պարտավոր է.

1) Պայմանագրի 1-ին կետում նշված գումարն օգտագործել բնակելի տան կառուցման նպատակով.

2) բնակելի տան կառուցման աշխատանքներն իրականացնել բնակելի տան կառուցման համար տրված շինարարության թույլտվությանը համապատասխան առանց ժամկետի երկարաձգման.

3) Պայմանագրով սահմանված պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում փոխհատուցել Պայմանագրի 1-ին կետում նշված գումարը և վճարել այդ գումարի 20 տոկոսի չափով տուգանք: Տուգանքի վճարումը Շահառուին չի ազատում իր պարտավորությունները կատարելու և խախտումները վերացնելու պարտականությունից:

### **III. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱժՈՐ)**

6. Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է Պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլ արտակարգ և անկանխատեսելի հանգամանքներ, որոնք անհնարին են դարձնում Պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է երեք ամսից ավելի, ապա Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել Պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

### **IV. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ**

7. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և գործում է մինչև Շահառուի կողմից Պայմանագրով ստանձնած պարտավորությունների պատշաճ կատարումը:

### **V. ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՐԳԸ**

8. Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերի լուծումը հանձնվում է դատարանի քննությանը:

**VI. ԵԶՐԱՓՈՒԿ ԴՐՈՒՅԹՆԵՐ**

9. Պայմանագիրը կազմված է հայերեն լեզվով, հավասարազոր իրավաբանական ուժ ունեցող երկու օրինակից, որոնցից մեկական օրինակ տրամադրվում է Կողմերին:

10. Պայմանագրի անաբաժանելի մաս է համարվում ծավալաթերթ-նախահաշիվը:

**VII. ԿՐՈՄԵՐԻ ՎԱԿԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ԱՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

Նախարարություն  
Արցախի Հանրապետության աշխատանքի,  
սոցիալական հարցերի և վերաբնակեցման  
նախարարություն  
Գտնվելու վայրը՝ \_\_\_\_\_  
Հ/հ \_\_\_\_\_  
\_\_\_\_\_  
(ստորագրությունը)

\_\_\_\_\_ 20 թվական

Կ.Տ.

Շահառու  
\_\_\_\_\_  
(անունը, ազգանունը)  
Անձնագրի  
սերիան համարը՝ \_\_\_\_\_  
Հասցեն՝ \_\_\_\_\_  
Հ/հ \_\_\_\_\_  
\_\_\_\_\_  
(ստորագրությունը)

\_\_\_\_\_ 20 թվական

**ԱՐՑԱՒԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ,  
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ԵՎ ՎԵՐԱԲՆԱԿԵՑՄԱՆ  
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԴԵԿԱՎԱՐ**

**Գ. ԳՐԻԳՈՐՅԱՆ**

**ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ**

Հ/Հ	Աշխատանքի անվանումը	Չափման միավորը	Քանակը	Նյութերի արժեքը	Հիմնական աշխատատարձ	Մեքենաների և մեխանիզմների շահամեծծան հարժեքը	Ընդամենը միավորի արժեքը	Ընդհանուրը	Կատարված աշխատանքների ծավալը՝ արտա-հայտված տոկոսային հարաբերությամբ	Կատարված աշխատանքների ծավալը՝ արտա-հայտված գումարով
				հազար ՀՀ դրամ	հազար ՀՀ դրամ	հազար ՀՀ դրամ	հազար ՀՀ դրամ	հազար ՀՀ դրամ	տոկոսը	հազար ՀՀ դրամ
1.										
2.										

ԱՐՑԱՄԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ,  
 ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ԵՎ ՎԵՐԱԲՆԱԿԵՑՄԱՆ  
 ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

Գ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

Գրանցված է  
Արցախի Հանրապետության  
արդարադատության նախարարության  
կողմից 28-ին փետրվարի 2019 թվականին  
Պետական գրանցման համարը 1011915

**Ա Ր Ց Ա Ն Ի Հ Ա Ն Ր Ա Պ Ե Տ ՈՒ Թ Յ Ա Ն  
Ա Ռ Ո Ղ Ջ Ա Պ Ա Հ ՈՒ Թ Յ Ա Ն Ն Ա Ն Ա Ր Ա Ր**

**Հ Ր Ա Մ Ա Ն**

«18» փետրվարի 2019թ.

N 44-Ն

ք. Ստեփանակերտ

**Ա Ն Ջ Ի Ն Ա Ռ Ա Ն Ջ Ի Ն Ս Ե Ն Յ Ա Կ Ի Կ Ա Մ Լ Ր Ա Ց ՈՒ Ց Ի Չ Բ Ն Ա Կ Ե Լ Ի Մ Ա Կ Ե Ր Ե Ս Ի  
Ի Ր Ա Կ ՈՒ Ն Ք Վ Ե Ր Ա Պ Ա Հ Ո Ղ Հ Ի Վ Ա Ն Դ ՈՒ Թ Յ ՈՒ Ն Ն Ե Ր Ի Ց Ա Ն Կ Ը  
Հ Ա Ս Տ Ա Տ Ե Լ ՈՒ Մ Ա Ս Ի Ն**

Արցախի Հանրապետության կառավարության 2018 թվականի  
դեկտեմբերի 7-ի N 1004-Ն որոշմամբ հաստատված հավելված 1-ի 11-րդ  
կետի 3-րդ ենթակետին համապատասխան՝

**Հ Ր Ա Մ Ա Ց ՈՒ Մ ԵՄ**

1. Հաստատել անձին առանձին սենյակի կամ լրացուցիչ բնակելի  
մակերեսի իրավունք վերապահող հիվանդությունների ցանկը՝ համաձայն  
հավելվածի:

2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման  
օրվան հաջորդող տասներորդ օրը:

**Ա. Բ Ա Ղ Ր Յ Ա Ն**



**ՑԱՆԿ**

**ԱՆՁԻՆ ԱՌԱՆՁԻՆ ՍԵՆՅԱԿԻ ԿԱՍ ԼՐԱՑՈՒՑԻՉ ԲՆԱԿԵԼԻ ՄԱԿԵՐԵՍԻ ԻՐԱԿՈՒՆՔ  
ՎԵՐԱՊԱՀՈՂ ՀԻՎԱՆՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ**

Հ/Հ	Հիվանդության նկարագիր	Հիվանդության դասակարգիչ (ՀԴ-10 <sup>9</sup> )
1.	Տուբերկուլոզ՝ ցանկացած օրգանի և օրգան համակարգի բացիլազատությամբ, հաստատված ցանքսի միջոցով	A15, A17-A19
2.	Խրոնիկ և ձգձգվող հոգեկան խանգարումներ՝ կայուն ծանր կամ հաճախ սրացող հիվանդագին դրսևորումներով	F01, F03-F09, F20-F29, F30-F33
3.	Տրախեստոմա, աղիքային և միզային խուղակ, ցկյանս նեֆրոստոմա, միզապարկի ստոմա (եթե հնարավոր չէ իրականացնել ռեկոնստրուկտիվ վիրահատություն՝ ստոման փակելու համար), վիրահատական եղանակով չկարգավորվող անմիզապահություն, անբնական անուս (աղեստամոքսային համակարգի անընդհատության վերականգնման անհնարինության դեպքում), դեմքի և գանգի արատներ՝ ուղեկցվող շնչառական, ծամելու և կուլ տալու ֆունկցիաների խանգարումներով	Z93.0, Z93.2-Z93.6, K63.2, N28.8, N32.1-N32.2, N36.0, N39.4, N82, Q35-Q37, Q67.0-Q67.4
4.	Մաշկի բազմակի ախտահարումներ՝ ամբողջականության խախտումով (առատ բշտերով)	L10, L12.2, L12.3, L13.0, L88
5.	Հոդախտային փսորիազ՝ հաշմանդամության սայլակների կիրառում պահանջող	L40.5
6.	Լեպրա	A30
7.	Երեխաների մոտ մարդու իմունային անբավարարության վիրուսով (ՄԻԱՎ) հարուցված հիվանդություն	B20-B24
8.	Ստորին վերջույթների բացակայություն կամ հենաշարժողական համակարգի հիվանդություն, այդ թվում՝ ժառանգական ծագման, ստորին վերջույթների ֆունկցիայի կայուն խանգարումներով, հաշմանդամության սայլակների կիրառում պահանջող	M05-M06, M16-M17, M30-M35, M45, Q72.0, Z89.7-Z89.9, Z99.3
9.	Կենտրոնական նյարդային համակարգի օրգանական ախտահարումներ՝ ուղեկցվող ստորին վերջույթների ֆունկցիայի կայուն խանգարումներով, հաշմանդամության սայլակի կիրառում պահանջող, և (կամ) կոնքի	G35, G60.0, G71.2, G80, T90.2-T90.9, T91.1, T91.3, Z99.3, Z99.8

	օրգանների ֆունկցիաների խանգարումներով	
10.	Վիճակ ներքին օրգանների և ոսկրածուծի փոխպատվաստումից հետո	Z94
11.	Երիկամների ծանր օրգանական ախտահարումներ՝ բարդացված 2-3-րդ աստիճանի երիկամային անբավարարությամբ	N03-N05, N07, N11-N15, N20.9, N25-N28, N18-N19

\* Հիվանդությունների և առողջության հետ կապված խնդիրների վիճակագրական դասակարգիչ (տասերորդ վերանայում):

**ԱՐՑԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ  
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱԵՆԱՏԱԿԱԶՄԻ ԴԵԿԱՎԱՐ**

**Ա. ԱՐԱՔԵԼՅԱՆ**

Գրանցված է  
Արցախի Հանրապետության  
արդարադատության նախարարության  
կողմից 2019 թվականի մարտի 4-ին  
Պետական գրանցման համարը 1021916

## ԱՐՑԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

### ՀՐԱՄԱՆ

«04» մարտի 2019 թվականի

N 22-Ն

ք. Ստեփանակերտ

### ԼԵՆՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՂԵԿՏԵՄԲԵՐԻ 22-Ի ԹԻՎ 98-Ն ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 71-րդ հոդվածին համապատասխան՝

### ՀՐԱՄԱՑՈՒՄ ԵՄ

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության արդարադատության նախարարի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի «Հարկադիր կատարողների կողմից կատարողական վարույթներով կիրառվող փաստաթղթերի ձևերը հաստատելու մասին» թիվ 98-Ն հրամանում կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները՝

1) նախաբանից հանել «,72.1» թիվը.

2) հրամանով հաստատված հավելվածում՝

ա. լրացնել հետևյալ բովանդակությամբ 2.1-ին կետը՝

«2.1. Որոշում կատարողական վարույթ հարուցելու և պարտապանի գույքի վրա արգելանք դնելու մասին (Ձև 2.1)».

բ. 54-րդ, 56-րդ և 61-րդ կետերի «Լեռնային Ղարաբաղի» բառերը փոխարինել «Արցախի» բառով.

գ. 55-րդ կետի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի տարածքային ստորաբաժանում» բառերը փոխարինել «Արցախի Հանրապետության էկոնոմիկայի և արտադրական ենթակառուցվածքների նախարարության աշխատակազմի անշարժ գույքի կադաստրի վարչություն» բառերով.

դ. 57-րդ կետի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության արդարադատության նախարարության աշխատակազմի պետական ռեգիստրի բաժին» բառերը փոխարինել «Արցախի Հանրապետության արդարադատության

նախարարության աշխատակազմի իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալություն» բառերով.

ե. 58-րդ կետի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության արդարադատության նախարարության աշխատակազմի պետական ռեգիստրի տարածքային ստորաբաժանում» բառերը փոխարինել «Արցախի Հանրապետության արդարադատության նախարարության աշխատակազմի իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալություն» բառերով.

զ. 59-րդ և 60-րդ կետերի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության սոցիալական ապահովության «Սոցիալական ապահովության ծառայություն» գործակալություն» բառերը փոխարինել «Արցախի Հանրապետության աշխատանքի, սոցիալական հարցերի և վերաբնակեցման նախարարության աշխատակազմի «Սոցիալական ապահովության պետական գործակալություն» բառերով.

է. 1-37-րդ և 62-րդ ձևերում «ԼՂՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան» բառերը փոխարինել «ԱՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան» բառերով.

ը. 5-րդ և 13-րդ ձևերում «ԼՂՀ գլխավոր հարկադիր կատարող» բառերը փոխարինել «ԱՀ գլխավոր հարկադիր կատարող» բառերով.

թ. 48-50-րդ ձևերում «ԼՂՀ արդարադատության» բառերը փոխարինել «ԱՀ արդարադատության» բառերով, իսկ «ԼՂՀ օրենսդրությամբ» բառերը՝ «ԱՀ օրենսդրությամբ» բառերով.

ժ. 50-րդ ձևում «ԼՂՀ Կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի» բառերը փոխարինել «Արցախի Հանրապետության էկոնոմիկայի և արտադրական ենթակառուցվածքների նախարարության աշխատակազմի անշարժ գույքի կադաստրի վարչության» բառերով, իսկ «տարածքային ստորաբաժանման» բառերը՝ «բաժնի» բառով.

ժա. 54-57-րդ, 59-րդ, 60-րդ և 64-71-րդ ձևերում «ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ» բառերը փոխարինել «ԱՐՑԱԽԻ» բառով.

ժբ. 54-րդ ձևում «ԼՂՀ ՉՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ» բառերը փոխարինել «ԱՀ ՉՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ» բառերով.

ժգ. 55-րդ ձևում «ԼՂՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԿԱՂԱՍՏՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ» բառերը փոխարինել «ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ԵՎ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԿԱՂԱՍՏՐԻ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ» բառերով, իսկ «տարածքային ստորոբաժանման ղեկավար» բառերը հանել:

ժդ. 56-րդ ձևում «ԼՂՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ» բառերը փոխարինել «ԱՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ» բառերով.

ժե. 57-րդ ձևում «ԼՂՀ ԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐԻ ԲԱԺՆԻ ՊԵՏ» բառերը փոխարինել «ԱՀ ԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՊԵՏ» բառերով.

ժզ. 59-րդ և 60-րդ ձևերում «ԼՂՀ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ» ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՊԵՏ» բառերը փոխարինել «ԱՀ ԱՇԽԱՏԱՆՔԻ, ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ԵՎ ՎԵՐԱԲՆԱԿԵՑՄԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ «ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՊԵՏ» բառերով.

ԺԷ. 62-րդ ձևում «8-րդ կետով» բառերը փոխարինել «ը) կետով» բառերով, «Անվճարունակության (սնանկության) մասին» ԼՂՀ օրենքի 45-46-րդ հոդվածների, 82-րդ հոդվածի 1-ին մասի գ) կետի» բառերը՝ «Սնանկության մասին» ԼՂՀ օրենքի 57-րդ, 59-րդ հոդվածների և 95-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի բառերով, իսկ «Անվճարունակության (սնանկության) մասին» ԼՂՀ օրենքի 82-րդ» բառերը՝ «Սնանկության մասին» ԼՂՀ օրենքի 95-րդ» բառերով.

ԺԸ. 63-րդ ձևում «ԴԱՀԿ մասին» բառերը փոխարինել «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» բառերով, իսկ «և 72.1 հոդվածներով» բառերը՝ «հոդվածով» բառով.

3) 58-րդ և 59-րդ ձևերը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն NN 1 և 2 հավելվածների.

4) լրացնել Ձև 2.1՝ համաձայն N3 հավելվածի:

2. Սույն հրամանով լրացվող 2.1-ին Ձևը կիրառվելու է մինչև 50 000 ՀՀ դրամ բռնագանձման պահանջով կատարողական թերթի դեպքում:

3. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

**Ա. ԴԱՆԻԵԼՅԱՆ**

«Ձև 58

ԱՐՑԱՒԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ  
ՂԵՏԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՀԱՐԿԱԴԻՐ ԿԱՏԱՐՈՒՄՆ ԱՊԱՀՂՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ  
\_\_\_\_\_ ԲԱԺԻՆ (ԲԱԺԱՆՄՈՒՆՔ)

N \_\_\_\_\_

«\_\_\_» \_\_\_\_\_ 20\_\_թ.

ԱՀ ԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ  
ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐԻ ԳՈՐԾԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏ

ՀԱՐՑՈՒՄ

\_\_\_\_\_ կատարողական վարույթի համարը

Ղեկավարվելով «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ԼՂՀ  
օրենքի 40-րդ հոդվածի 6-րդ մասով՝ խնդրում եմ հայտնել

\_\_\_\_\_ իրավաբանական անձի անվանումը, գտնվելու վայրը

հիմնադիրների տվյալները (անունը, ազգանունը կամ անվանումը, անձնագրի կամ  
հարկ վճարողի հաշվի համարները, բնակության կամ գտնվելու վայրը):

Հարկադիր կատարող՝ \_\_\_\_\_

ստորագրություն

ազգանուն

**Ծանոթություն.** «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ԼՂՀ օրենքի  
40-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն պետական մարմինները և այլ  
կազմակերպությունները պարտավոր են հարկադիր կատարողի հարցումներին  
պատասխանել յոթնօրյա ժամկետում, եթե օրենքով կամ այլ իրավական ակտերով  
հարցումներին պատասխանելու համար այլ ժամկետ սահմանված չէ:»:

ԱՐՑԱՒԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ  
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԴԵԿԱՎԱՐ

Կ.ՔՈՉԱՐՅԱՆ

ԱՐՑԱՄԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ  
ՂԱՏԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՀԱՐԿԱՂԻՐ ԿԱՏԱՐՈՒՄՆ ԱՊԸՀՈՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ  
ԲԱԺԻՆ (ԲԱԺԱՆՄՈՒՆՔ)

N \_\_\_\_\_

« \_\_\_\_ » \_\_\_\_\_ 20 \_\_\_\_թ.

ԱՀ \_\_\_\_\_

ՁԻՆԿՈՐԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐ  
\_\_\_\_\_

ՀԱՐՑՈՒՄ \_\_\_\_\_

կատարողական վարույթի համարը

Ղեկավարվելով «Ղատական ակտերի հարկադիր կատարման մասին» ԼՂՀ  
օրենքի 40-րդ հոդվածի 6-րդ մասով՝ խնդրում եմ հայտնել

ֆիզիկական անձի անունը, ազգանունը, հայրանունը, բնակության (հաշվառման) վայրը

Ձեզ մոտ որպես կենսաթոշակառու հաշվառված է, թե ոչ: Հաշվառված լինելու  
դեպքում խնդրում եմ հայտնել կենսաթոշակի չափը:

Հարկադիր կատարող՝ \_\_\_\_\_

ստորագրություն

ազգանուն

**Ծանոթություն.** «Ղատական ակտերի հարկադիր կատարման մասին» ԼՂՀ օրենքի  
40-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն պետական մարմինները և այլ  
կազմակերպությունները պարտավոր են հարկադիր կատարողի հարցումներին  
պատասխանել յոթնօրյա ժամկետում, եթե օրենքով կամ այլ հրավական ակտերով  
հարցումներին պատասխանելու համար այլ ժամկետ սահմանված չէ:»:

ԱՐՑԱՄԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ  
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԴԵԿԱՎԱՐ

Կ.ՔՈՉԱՐՅԱՆ

«Ձև 2.1

**ՈՐՈՇՈՒՄ**  
**ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹ ՀԱՐՈՒՑԵԼՈՒ ԵՎ ՊԱՐՏԱՊԱՆԻ**  
**ԳՈՒՅՔԻ ԿՐԱ ԱՐԳԵԼԱՆՔ ԴՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

« \_\_\_\_\_ » \_\_\_\_\_ 20 \_\_\_\_թ. թ. \_\_\_\_\_

ԴԱՀԿԱ ծառայության \_\_\_\_\_ բաժնի (բաժանմունքի)  
\_\_\_\_\_ քննարկելով  
(պաշտոնը, կոչումը, անուն-ազգանունը)  
\_\_\_\_\_ դատարանի

կողմից « \_\_\_\_ » \_\_\_\_\_ 20\_\_թ. տրված թիվ \_\_\_\_\_ կատարողական թերթը

**ՊԱՐՁԵՑԻ**

\_\_\_\_\_ կատարողական թերթի պահանջը  
\_\_\_\_\_  
\_\_\_\_\_  
\_\_\_\_\_  
\_\_\_\_\_  
\_\_\_\_\_

Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ԼՂՀ օրենքի 28, 30 հոդվածներով, 44 հոդվածի 4-րդ մասով և 68 հոդվածով.

**ՈՐՈՇԵՑԻ**

1. Հարուցել կատարողական վարույթ՝ թիվ « \_\_\_\_ » \_\_\_\_\_

ինչպես նաև որպես կատարողական գործողությունների կատարման ծախս \_\_\_\_\_ դրամ բռնագանձելու մասին:

2. Արգելանք դնել պարտապան \_\_\_\_\_  
անունը, ազգանունը, հրավաթանական անձի անվանումը



պատկանող

գրքի անվանումը, գտնվելու վայրը (հասցեական հասցեի տեղեկությունների առկայության դեպքում)

Պարտականին արգելել

(նշել օրենքի 44 հոդվածի 1-ին մասով նախատեսված սահմանափակման տեսակը)

Որոշման պատճենը ուղարկել կողմերին:

Որոշումը կարող է բողոքարկվել ԱՀ ընդհանուր իրավասության առաջին աստիճանի դատարան կամ վերադատության կարգով՝ որոշումը ստանալու օրվանից տասնօրյա ժամկետում:

«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ԼՂՀ օրենքի 28 հոդվածի 5-րդ մասի համաձայն հարկադիր կատարողի որոշման բողոքարկումը չի կասեցնում կատարողական գործողությունները:

Հարկադիր կատարող՝

ազգանուն

ստորագրություն

»:

ԱՐՑԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ  
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԴԵԿԱՎԱՐ

Կ.ՔՈՉԱՐՅԱՆ

Գրանցված է  
Արցախի Հանրապետության  
արդարադատության նախարարության  
կողմից 2019 թվականի մարտի 12-ին  
Պետական գրանցման համարը 1121918

**ԱՐՑԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ԵՎ  
ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ**

**ՀՐԱՄԱՆ**

«01» մարտի 2019թ.

N 2-Ն

ք. Ստեփանակերտ

**ՓՈՍՏԱՅԻՆ ՎՃԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՆՇԱՆԻ ՆՍՈՒՇՆԵՐԸ  
ՍԱՀՄԱՆՆԵԼՈՒ ԵՎ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԴՆՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Փոստային կապի մասին» Լեռնային Ղարաբաղի  
Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի երկրորդ մասի «դ» կետով՝

**ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ**

1. Սահմանել փոստային վճարման պետական նշանի նմուշները՝  
«ԵՎՐՈՊԱ», "EUROPE" շարքից «Ազգային թռչուն», "National bird"  
թեմատիկայով երկու նամականիշ՝ համաձայն NN 1 և 2 հավելվածների:

2. Գործողության մեջ դնել՝ «ԵՎՐՈՊԱ», "EUROPE" շարքից «Ազգային  
թռչուն», "National bird" թեմատիկայով երկու նամականիշ՝ սահմանելով  
յուրաքանչյուրի անվանագինը՝ 400-ական ՀՀ դրամ, տպաքանակը՝ 4000-  
ական հատ:

3. Արցախի Հանրապետության էկոնոմիկայի և արտադրական  
ենթակառուցվածքների նախարարության աշխատակազմի իրավաբանական  
բաժնի պետ Ա. Թովմասյանին՝ սույն հրամանը Արցախի Հանրապետության  
օրենսդրությամբ սահմանված կարգով ներկայացնել Արցախի Հանրապե-  
տության արդարադատության նախարարություն՝ պետական գրանցման:

**Լ. ԳՐԻԳՈՐՅԱՆ**

Հավելված N 1  
Արցախի Հանրապետության էկոնոմիկայի և  
արտադրական ենթակառուցվածքների նախարարի  
2019թ. մարտի 01-ի N 2-Ն հրամանով



ԱՀ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ԵՎ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ  
ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ  
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԴԵԿԱԿԱՐ

Է. ՎԱՐԴԱՆՅԱՆ

Հավելված N 2  
Արցախի Հանրապետության էկոնոմիկայի և  
արտադրական ենթակառուցվածքների նախարարի  
2019թ. մարտի 01-ի N 2-Ն հրամանով



ԱՀ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ԵՎ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ  
ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ  
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԴԵԿԱԿԱՐ

Է. ՎԱՐԴԱՆՅԱՆ

ԱՐՑԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ  
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ  
ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«28» փետրվարի 2019 թվականի

N 1-Ա

ք. Ստեփանակերտ

**«ՀԱԿԱՐԻ» ՍԱՀՄԱՆԱՓՈՎ ԴԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ  
«ՀԱՉԱՐԻ-2» ՓՈՔՐ ՀԻՊՐՈՒԼԵԿՏՐԱԿԱՅԱՆՈՒՄ ԷԼԵԿՏՐՈՎԿԱՆ ԷՆԵՐԳԻԱՅԻ  
(ՀՋՈՐՈՒԹՅԱՆ) ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԼԻՑԵՆԶԻԱ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի «գ» կետը, 17-19-րդ, 29-րդ հոդվածները, 2017 թվականի սեպտեմբերի 28-ի ««Էներգետիկայի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Արցախի Հանրապետության օրենքի 17-րդ հոդվածը, «Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 73-րդ հոդվածը, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի 2017 թվականի հոկտեմբերի 25-ի «Էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզավորման կարգը հաստատելու և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի 2011 թվականի հունիսի 28-ի թիվ 57Ն որոշումն ուժը կորցրած ձանաչելու մասին» N 53-Ն որոշումը և հաշվի առնելով «ՀԱԿԱՐԻ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 2019 թվականի հունվարի 30-ի «Հազարի-2» փոքր հիդրոէլեկտրակայանի կառուցման ժամկետը երկարաձգելու և էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության լիցենզիա ստանալու հայտը՝ Արցախի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովը **ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.**

1. «ՀԱԿԱՐԻ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը տրամադրել Արցախի Հանրապետության Քաշաթաղի շրջանում՝ Աղանուս և Ծաղկաբերդ համայնքների տարածքում՝ Հազարի գետի 710,5 մետրից 645,5 մետր գետահատվածքներում (բնական ջրահոսք)՝ «Հազարի-2» փոքր հիդրոէլեկտրակայանում, էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության լիցենզիա՝ մինչև 2035 թվականի նոյեմբերի 1-ը գործողության ժամկետով, որը ներառում է արտադրական հզորությունների կառուցման ժամանակահատվածը՝ մինչև 2020 թվականի նոյեմբերի 1-ը:

2. Հաստատել «ՀԱԿԱՐԻ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության «Հազարի-2» փոքր հիդրոէլեկտրակայանում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության լիցենզիայի պայմանները՝ համաձայն հավելվածի:

3. Ուժը կորցրած ձանաչել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի 2016 թվականի դեկտեմբերի 22-ի ««ՀԱԿԱՐԻ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը «Հազարի-2» փոքր հիդրոէլեկտրակայանի կառուցման լիցենզիա տրամադրելու մասին» N 57Ա որոշումը:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՆԱԽԱԳԱՀ

Մ. ՎԻՐԱԲՅԱՆ

Հավելված  
Արցախի Հանրապետության հանրային  
ժառանգությունները և տնտեսական մրցակցությունը  
կարգավորող պետական հանձնաժողովի  
2019 թվականի փետրվարի 28-ի N 1-Ա որոշման

**«ՀԱԿԱՐԻ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության  
«Հազարի-2» փոքր հիդրոէլեկտրակայանում էլեկտրական էներգիայի  
(հզորության) արտադրության լիցենզիայի**

### **Պայմանները**

**(Լիցենզիա ԼԷ N 0001, տրված Արցախի Հանրապետության հանրային ժառանգությունները  
և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի 2019  
թվականի փետրվարի 28-ի N 1-Ա որոշմամբ)**

#### **1. ԼԻՑԵՆԶԻԱՅԻՆ ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

1. Սույն լիցենզիայում օգտագործված հասկացություններն են.

**1) Հանձնաժողով՝** Արցախի Հանրապետության հանրային ժառանգությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողով.

**2) Լիցենզավորված անձ՝** «ՀԱԿԱՐԻ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն.

**3) Լիցենզիա՝** Հանձնաժողովի կողմից Լիցենզավորված անձին տրված սույն փաստաթուղթը, որը հավաստում է փոքր հիդրոէլեկտրակայան կառուցելու և էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության գործունեություն իրականացնելու վերջինիս իրավունքն ու պարտականությունը.

**4) Շուկայի կանոններ՝** Հանձնաժողովի կողմից հաստատված հիմնարար փաստաթուղթ, որով կանոնակարգվում են էլեկտրաէներգետիկական համակարգում գործունեություն իրականացնող լիցենզավորված անձանց փոխհարաբերությունները, համակարգի հուսալիության և անվտանգության հետ առնչվող հիմնական կանոններն ու ցուցանիշները, ինչպես նաև դրանց և շուկայի բնականոն աշխատանքի ապահովման համար անհրաժեշտ մեխանիզմները.

**5) Ֆորս-մաժոր՝** արտակարգ և անկանխելի դեպքեր և հանգամանքներ, որոնք ստեղծվել են Լիցենզավորված անձի կամքից անկախ, ներառյալ (սակայն չսահմանափակվելով դրանցով) բնական աղետները, բնության ուժերի արտատվոր ուժեղ դրսևորումները, ինչպես, օրինակ, ջրհեղեղները, երկրաշարժերը, փոթորիկները, պտտահողմերը, նաև սաբոտաժային գործողություններ, ահաբեկչություններ, պատերազմներ, ապստամբություններ, հասարակական անկարգություններ, գործադուլներ, որոնք խոչընդոտում են Լիցենզավորված անձի գործունեությանը կամ հանգեցնում նրա ստանձնած ցանկացած պարտավորության կատարման ձգձգման կամ դադարեցման՝ հակառակ նրա կողմից գործադրված ջանքերի՝ խուսափելու, թուլացնելու կամ վերացնելու այդ ուժերի ազդեցությունը:

#### **2. ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ**

2. Լիցենզիան ուժի մեջ է մտնում 2019 թվականի փետրվարի 28-ից:

3. Լիցենզիան գործում է մինչև 2035 թվականի նոյեմբերի 1-ը, որից՝

1) մինչև 2020 թվականի նոյեմբերի 1-ը կառուցման երկարաձգված ժամանակահատվածն է,

2) մինչև 2035 թվականի նոյեմբերի 1-ը՝ էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության գործունեության իրականացման ժամանակահատվածն է:

4. Լիցենզիայի 3-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերով նախատեսված ժամանակահատվածը (ժամկետը) երկարաձգելու անհրաժեշտության դեպքում Լիցենզավորված անձը Հանձնաժողովի կողմից սահմանված կարգով և ժամկետներում հայտ է ներկայացնում Հանձնաժողով:

**3. ԼԻՑԵՆԶԱՎՈՐՎԱԾ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՏԱՐԱԾՔԸ**

5. Լիցենզավորված գործունեության աշխարհագրական տարածքը Արցախի Հանրապետության Քաշաթաղի շրջանի Աղանուս և Ծաղկաբերդ համայնքների տարածքն է՝ Հազարի գետի 710,5 մետրից 645,5 մետր գետահատվածքներում (բնական ջրահոսք):

**4. ԼԻՑԵՆԶԱՎՈՐՎԱԾ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԷՈՒԹՅՈՒՆԸ ԿԱԶՄՈՂ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ**

6. Լիցենզավորված անձին իրավունք է տրվում և պարտավորեցվում է Լիցենզիայով սահմանված ժամկետում կառուցել 6,21 մեգավատտ հաշվարկային հզորությամբ «Հազարի-2» փոքր հիդրոէլեկտրակայանը, արտադրել էլեկտրական էներգիա (հզորություն) ու այն վաճառել Շուկայի կանոններով:

**5. ՓՈՔՐ ՀԻԴՐՈՒԷԼԵԿՏՐԱԿԱՅԱՆԻ ՏԵԽՆԻԿԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ ԵՎ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՎԱԾ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱՎԵՇՏ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԸ**

7. Փոքր հիդրոէլեկտրակայանի տեխնիկատնտեսական ցուցանիշներն են՝

- 1) ջրառի և ջրահեռացման նիշերն են՝ 710,5 մետրից 645,5 մետր.
- 2) հաշվարկային ելք՝ 18,5 խորանարդ մետր վայրկյանում.
- 3) հաշվարկային ճնշում՝ 42,02 մետր.

4) փոքր հիդրոէլեկտրակայանի հաշվարկային հզորություն՝ 6,21 մեգավատտ:

8. Լիցենզիայի գործողության ընթացքում «Հազարի-2» փոքր հիդրոէլեկտրակայանի տեխնիկատնտեսական ցուցանիշների փոփոխության դեպքում Լիցենզավորված անձը դիմում է Հանձնաժողով՝ ներկայացնելով համապատասխան հիմնավորող փաստաթղթեր:

9. «Հազարի-2» փոքր հիդրոէլեկտրակայանի կառուցման ավարտից հետո էլեկտրական էներգիայի արտադրության գործունեությունն իրականացվելու է հետևյալ սարքավորումներով՝

- 1) գեներատորներ - 2 հատ,
- 2) հիդրոտուրբիններ - 2 հատ:

**6. ԼԻՑԵՆԶԱՎՈՐՎԱԾ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ**

10. Լիցենզավորված անձի գործունեությունը պետք է համապատասխանի «Էներգետիկայի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի, այլ օրենքների, Լիցենզիայի, Հանձնաժողովի կողմից ընդունված և այլ իրավական ակտերի պահանջներին:

11. Առանց Հանձնաժողովի հետ համաձայնեցնելու Լիցենզավորված անձն իրավունք չունի Լիցենզիայով սահմանված որևէ իրավունք և պարտականություն պայմանագրային կամ այլ հիմունքներով ամբողջովին կամ մասնակի օտարելու, զիջելու կամ այլ կերպ փոխանցելու մեկ այլ անձի:

12. Լիցենզիան չի կարող այլ անձանց օգտագործման տրվել, օտարվել կամ գրավադրվել, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

13. Լիցենզիայի գործողությունը չի տարածվում Լիցենզավորված անձի հետ համատեղ, այդ թվում՝ համատեղ գործունեության պայմանագրով գործունեություն իրականացնող այլ անձանց, ինչպես նաև Լիցենզավորված անձի մասնակցությամբ հիմնադրված կամ գործող իրավաբանական անձանց վրա:

14. Լիցենզավորված անձը լիցենզիա ունեցող մեկ այլ անձի 25 տոկոս և ավելի մաս կազմող բաժնետեր, փայատեր դառնալու կամ լիցենզիա ունեցող մեկ այլ անձի հետ միավորվելու գործարքի իրականացման օրվանից 15 աշխատանքային օր առաջ այդ մասին պարտավոր է գրավոր տեղեկացնել Հանձնաժողովին:

15. Լիցենզավորված անձի կանոնադրական կապիտալում 25 տոկոս և ավելի մասնակցություն ունեցող բաժնետերը կամ փայատերը նույն կամ մեկ այլ լիցենզավորված անձի 25 տոկոս և ավելի բաժնետոմս, բաժնեմաս ձեռք բերելու կամ փայամասնակցություն ունենալու, ինչպես նաև 25 տոկոս և ավելի բաժնետոմսեր

վաճառելու գործարքի իրականացման օրվանից 15 աշխատանքային օր առաջ այդ մասին պարտավոր է գրավոր տեղեկացնել Հանձնաժողովին:

16. Լիցենզավորված գործունեության իրականացման համար անհրաժեշտ հիմնական գույքը վաճառելու կամ գույքի նկատմամբ իրավունքը որևէ այլ կերպ փոխանցելու օրվանից 15 աշխատանքային օր առաջ Լիցենզավորված անձն այդ մասին պարտավոր է գրավոր տեղեկացնել Հանձնաժողովին:

17. Լիցենզավորված անձի կողմից իրականացվող տնտեսական այլ գործունեությունը չպետք է վտանգի Լիցենզիայի պայմանների պատշաճ կատարումը:

18. Լիցենզավորված անձը պարտավոր է իրականացնել իր տնօրինության տակ գտնվող սարքավորումների շահագործումը, տեխնիկական սպասարկումը և նորոգումը՝ ապահովելով քաղաքացիների, սպասարկող անձնակազմի կյանքի և առողջության անվտանգությունը:

19. Լիցենզավորված անձը պարտավոր է ապահովել լիցենզավորված գործունեության ընթացքում օգտագործվող սարքավորումների համապատասխանությունը Արցախի Հանրապետությունում գործող տեխնիկական կանոնակարգերին և Լիցենզիայում նախատեսված պայմաններին:

20. Լիցենզավորված անձը պարտավոր է ապահովել լիցենզավորված գործունեության մեջ ներգրավված շենքերի, շինությունների, ինժեներական կառույցների, էներգատեղակայանքների և գծերի մատչելիությունը Հանձնաժողովի և օրենքով սահմանված այլ մարմինների ներկայացուցիչների համար:

21. Բացառությամբ հարկային պարտավորությունների վերաբերյալ իրավասու մարմինների կողմից իրականացված ստուգումների եզրակացությունների (ակտերի), Լիցենզավորված անձը պարտավոր է Հանձնաժողով ներկայացնել իրավասու մարմինների ստուգման եզրակացությունները (ակտերը)՝ եզրակացությունների (ակտերի) ստացման պահից 23 աշխատանքային օրվա ընթացքում:

22. Լիցենզավորված անձը պարտավոր է Հանձնաժողովի կողմից առաջադրված ծրագրով և ժամկետներում իրականացնել տեխնիկական աուդիտ՝ Հանձնաժողովի հետ համաձայնեցված անկախ փորձագետների ներգրավմամբ: Աուդիտի հետ կապված ծախսերը կատարվում են Լիցենզավորված անձի կողմից:

23. Լիցենզավորված անձը պարտավոր է Հանձնաժողովի կողմից սահմանված կարգերին և ձևերին համապատասխան լիցենզավորված գործունեության մասին տեղեկատվություն և հաշվետվություններ ներկայացնել Հանձնաժողով:

24. Լիցենզավորված անձը պատասխանատվություն է կրում Հանձնաժողով ներկայացրած լիցենզավորված գործունեության մասին հաշվետվությունների և այլ տեղեկատվության հավաստիության համար:

25. Լիցենզավորված գործունեության հաշվապահական հաշվառումը պետք է առանձնացված լինի Լիցենզավորված անձի կողմից իրականացվող այլ գործունեության հաշվապահական հաշվառումից:

26. Լիցենզավորված անձի կողմից Հանձնաժողով ներկայացված տեղեկատվությունները հրապարակային են, եթե դրանք Լիցենզավորված անձի կողմից չեն համարվում գաղտնի և նշված չեն որպես «ընկերությանը վերաբերող գաղտնապահական տեղեկատվություն»: Լիցենզավորված անձն իրավունք ունի ապացուցելու, որ իր ներկայացրած տվյալների (ներառյալ՝ «ընկերությանը վերաբերող գաղտնապահական տեղեկատվության») հրապարակումը կարող է վնասել ընկերության մրցակցային գործունեության շահերին: Հանձնաժողովն իրավասու է ընդունելու կամ մերժելու նման տեղեկատվության չհրապարակման վերաբերյալ Լիցենզավորված անձի խնդրանքը:

27. Այն դեպքում, երբ Հանձնաժողովն ուսումնասիրում է Լիցենզավորված անձի կամ այլ անձանց կողմից ներկայացված որևէ հայտ, հարցադրում կամ դիմում-բողոք, մամուլում կամ զանգվածային լրատվության այլ միջոցներով հաղորդագրություն կամ տեղեկատվություն, Լիցենզավորված անձը, Հանձնաժողովի պահանջով, պարտավոր է ներկայացնել սպառիչ տեղեկատվություն:

28. Լիցենզավորված անձը պարտավոր է տասն աշխատանքային օրվա ընթացքում պատասխանել Հանձնաժողովի գրավոր հարցադրումներին, եթե Հանձնաժողովի կողմից այլ ժամկետներ սահմանված չեն:

29. Լիցենզավորված անձը ոչ ուշ, քան մինչև 2020 թվականի սեպտեմբերի 1-ը պարտավոր է Հանձնաժողով ներկայացնել «Հազարի-2» փոքր հիդրոէլեկտրակայանի կառուցման նախագիծը և նախահաշիվը, նախագծի տեխնիկական և Արցախի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերում շրջակա միջավայրի ազդեցության փորձաքննությունները, ինչպես նաև Հանձնաժողովի կողմից

սահմանված՝ էլեկտրաէներգետիկական համակարգին էլեկտրաէներգիա արտադրող կայանների միանալու կարգի համաձայն ստացված՝ էլեկտրական էներգիայի բաշխման ցանցին միանալու տեխնիկական պայմանների պատճենը:

30. Լիցենզավորված անձը մինչև Լիցենզիայի 3-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսված ժամկետի ավարտը պարտավոր է կատարել կարգաբերման-գործարկման աշխատանքներ՝ համաձայն Արցախի Հանրապետության օրենսդրության և առաքել էլեկտրական էներգիան էլեկտրական էներգիայի (հզորության) բաշխման լիցենզիա ունեցող անձին:

31. Լիցենզավորված անձը պարտավոր է մինչև Լիցենզիայով սահմանված կառուցման ժամանակահատվածի ավարտը Հանձնաժողով ներկայացնել փոքր հիդրոէլեկտրակայանի կառուցման ավարտը հավաստող Հանձնաժողովի սահմանած կարգով պահանջվող փաստաթղթերը և Շուկայի կանոններով սահմանված կարգով էլեկտրական էներգիայի (հզորության) վաճառքի մտադրության դեպքում՝ սակագնի սահմանման հայտ:

32. Լիցենզավորված անձի կողմից առաքվող էլեկտրաէներգիայի (հզորության) վաճառքի սակագները սահմանում է Հանձնաժողովը: Սակագների սահմանումն ու վերանայումն իրականացվում է Հանձնաժողովի կողմից սահմանված կարգով:

33. Լիցենզիայի 6-րդ կետում նշված հզորության մասնակի տեղադրման դեպքում Լիցենզավորված անձն իրավունք ունի Հանձնաժողով ներկայացնելու այդ մասով փոքր հիդրոէլեկտրակայանի կառուցման ավարտը հավաստող Հանձնաժողովի սահմանած կարգով պահանջվող փաստաթղթերը և Շուկայի կանոններով սահմանված կարգով էլեկտրական էներգիայի (հզորության) վաճառքի մտադրության դեպքում՝ սակագնի սահմանման հայտ:

34. Լիցենզավորված անձի և էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզիա ունեցող այլ անձանց միջև կնքված էներգամատակարարման և ծառայությունների մատուցման պայմանագրերը պետք է համապատասխանեն Հանձնաժողովի սահմանած պայմանագրերի օրինակելի ձևերին կամ պարտադիր պայմաններին: Այդ պայմանագրերն ուժի մեջ են մտնում Հանձնաժողովում գրանցվելու պահից:

35. Լիցենզավորված անձը պարտավոր է Հանձնաժողովին անմիջապես հայտնել այն հանգամանքների մասին, որոնք հանգեցրել են կամ կարող են հանգեցնել Լիցենզիայի պայմանների խախտումների:

36. Լիցենզավորված անձը պարտավոր է կատարել Համակարգի օպերատորի օպերատիվ հրահանգները՝ ըստ Հանձնաժողովի կողմից հաստատված կարգի և նրանց հետ կնքված պայմանագրի դրույթների:

37. Լիցենզավորված անձը պարտավոր է աջակցել Համակարգի օպերատորի կողմից իրականացվող էլեկտրական ցանցի հուսալիությունն ու անվտանգությունն ապահովող, Լիցենզավորված անձի սեփականությունը հանդիսացող պաշտպանիչ սարքերի, կարգավորիչների զննումներին, օրենսդրությամբ և այլ իրավական ակտերով ու պայմանագրերով սահմանված կարգով ապահովել այդ սարքերի շահագործումը, կատարել դրանց նորոգման, փոխարինման և այլ անհրաժեշտ աշխատանքներ, ինչպես նաև աջակցել իր տնօրինության տակ գտնվող այլ Անձանց սեփականությունը հանդիսացող պաշտպանիչ սարքերի, կարգավորիչների զննման իրականացմանը:

## **7. ԼԻՑԵՆԶԱՎՈՐՎԱԾ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՒՄԸ**

38. Լիցենզիայի պայմանների պահպանման վերահսկումն իրականացնում է Հանձնաժողովը:

39. Լիցենզիայի պայմանների պահպանման վերահսկումն ապահովելու նպատակով Հանձնաժողովը և նրա կողմից լիազորված ներկայացուցիչներն ունեն ազատ մուտքի իրավունք Լիցենզավորված անձի տարածք:

40. Լիցենզավորված անձը վերահսկման իրականացման ընթացքում պետք է լիովին համագործակցի և աջակցի Հանձնաժողովին կամ նրա կողմից լիազորված ներկայացուցիչին:

41. Հանձնաժողովի կողմից լիազորված ներկայացուցիչները Լիցենզավորված անձի տարածքում պահպանում են ներքին կանոնակարգը և Արցախի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված նորմերը:



## 8. ՏՈՒԺԱՆՔՆԵՐԸ

42. Լիցենզավորված անձի կողմից «Էներգետիկայի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի դրույթները, Հանձնաժողովի ընդունած իրավական ակտերը, Լիցենզիայի պայմանները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքերում Հանձնաժողովն իրավասու է տալու խախտումները վերացնելու վերաբերյալ հանձնարարականներ և կարող է կիրառել տուժանքների հետևյալ տեսակները՝

1) նախազուշացում.

2) «Էներգետիկայի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքով սահմանված տուգանքներ.

3) Լիցենզիայի գործողության կասեցում.

4) Լիցենզիայի գործողության դադարեցում:

43. Լիցենզավորված անձի կամ Հանձնաժողովի նախաձեռնությամբ Լիցենզիայի գործողությունը դադարեցնելու դեպքում Հանձնաժողովը և Լիցենզավորված անձը ղեկավարվում են «Էներգետիկայի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքով և Արցախի Հանրապետության օրենսդրությամբ:

44. Լիցենզավորված անձը չի ենթարկվում պատասխանատվության՝ Լիցենզիայի 42-րդ կետի համաձայն, եթե նրա գործունեության մեջ արձանագրված խախտումները Ֆորս-մաժորի հետևանք են:

## 9. ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ՓՈՓՈՒՍՈՒԹՅՈՒՆԸ

45. Լիցենզիայում փոփոխություններ կարող են կատարվել Լիցենզավորված անձի կամ Հանձնաժողովի նախաձեռնությամբ՝ Հանձնաժողովի կողմից սահմանված կարգով:

46. Լիցենզավորված անձի վերակազմակերպման կամ նրա անվանման կամ գտնվելու վայրի փոփոխման դեպքում Լիցենզավորված անձը պարտավոր է այդ փոփոխություններն իրավական ուժ ստանալու օրվանից սկսած տասնհինգ օրյա ժամկետում հայտ ներկայացնել Հանձնաժողով՝ Լիցենզիայի վերաձևակերպման համար:

Ի վկայություն սույնի, Արցախի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովը սույն Լիցենզիան տրամադրել է՝

«ԱԿԱՐԻ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը  
(ընկերության անվանումը)

ԱՀ, ք. Ստեփանակերտ, Կ. Դանիելյան փ., տուն 17  
(գտնվելու վայրը)

Գործունեության վայրը.

Արցախի Հանրապետության Քաշաթաղի շրջանի Աղանուս և Ծաղկաբերդ համայնքների տարածք՝ Հազարի գետի 710,5 մետրից 645,5 մետր գետահատվածքներում:

ԱՐՑԱՍԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ  
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ  
ՍՐՑԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՊԵՏԱԿԱՆ  
ՀԱՆՁՆԱԺՋՈՂՎԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

Հ. ԹՈՐՈՍՅԱՆ

ԱՐՑԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ  
ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՐԳԱԿՈՐՈՂ  
ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«27» մարտի 2019 թվականի

N 4-Ա

ք. Ստեփանակերտ

«ԱՐՑԱՆ ՀԷԿ» ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ «ՔԱՐՎԱՃԱՌ»  
ՓՈՔՐ ՀԻՂՐՈՒԷԼԵԿՏՐՈՎԱԿԱՅԱՆՈՒՄ ԷԼԵԿՏՐՈՎԱԿԱՆ ԷՆԵՐԳԻԱՅԻ  
(ՀՋՈՐՈՒԹՅԱՆ) ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԼԻՑԵՆԶԻԱ  
ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի «գ» կետը, 17-19-րդ, 29-րդ հոդվածները, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի 2017 թվականի հոկտեմբերի 25-ի «Էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզավորման կարգը հաստատելու և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի 2011 թվականի հունիսի 28-ի թիվ 57Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 53-Ն որոշումը և հաշվի առնելով «Արցախ ՀԷԿ» բաց բաժնետիրական ընկերության 2019 թվականի փետրվարի 27-ի հայտը՝ Արցախի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովը **ո Ր Ո Շ ՈՒ Մ Է**.

1. «Արցախ ՀԷԿ» բաց բաժնետիրական ընկերությանը տրամադրել Արցախի Հանրապետության Շահումյանի շրջանի Ծար համայնքի և պետական պահուստային ֆոնդի տարածքներում՝ Թարթառ գետի 1728,5 մետրից 1570,5 մետր գետահատվածքներում (բնական ջրահոսք)՝ «Քարվաճառ» փոքր հիդրոէլեկտրակայանում, էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության լիցենզիա՝ մինչև 2036 թվականի սեպտեմբերի 30-ը գործողության ժամկետով, որից կառուցման ժամանակահատվածը՝ մինչև 2021 թվականի սեպտեմբերի 30-ը:

2. Հաստատել «Արցախ ՀԷԿ» բաց բաժնետիրական ընկերության «Քարվաճառ» փոքր հիդրոէլեկտրակայանում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության լիցենզիայի պայմանները՝ համաձայն հավելվածի:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՆԱՆԱԳԱՀ

Մ. ԿԻՐԱԲՅԱՆ

**Հավելված**  
**Արցախի Հանրապետության հանրային**  
**ծառայությունները և տնտեսական մրցակցությունը**  
**կարգավորող պետական հանձնաժողովի**  
**2019 թվականի մարտի 27-ի N 4-Ա որոշման**

**«Արցախ ՀԷԿ» բաց բաժնետիրական ընկերության «Քարվաճառ» փոքր  
հիդրոէլեկտրակայանում էլեկտրական էներգիայի (հզորության)  
արտադրության լիցենզիայի**

**Պայմանները**

**(Լիցենզիա LE N 0002՝ տրված Արցախի Հանրապետության հանրային ծառայությունները  
և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի 2019  
թվականի մարտի 27-ի N 4-Ա որոշմամբ)**

**1. ԼԻՑԵՆԶԻԱՅԻՆ ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

1. Սույն լիցենզիայում օգտագործված հասկացություններն են.
  - 1) **Հանձնաժողով**՝ Արցախի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողով.
  - 2) **Լիցենզավորված անձ**՝ «Արցախ ՀԷԿ» բաց բաժնետիրական ընկերություն.
  - 3) **Լիցենզիա**՝ Հանձնաժողովի կողմից Լիցենզավորված անձին տրված սույն փաստաթուղթը, որը հավաստում է փոքր հիդրոէլեկտրակայան կառուցելու և էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության գործունեություն իրականացնելու վերջինիս իրավունքն ու պարտականությունը.
  - 4) **Շուկայի կանոններ**՝ Հանձնաժողովի կողմից հաստատված հիմնարար փաստաթուղթ, որով կանոնակարգվում են էլեկտրաէներգետիկական համակարգում գործունեություն իրականացնող լիցենզավորված անձանց փոխհարաբերությունները, համակարգի հուսալիության և անվտանգության հետ առնչվող հիմնական կանոններն ու ցուցանիշները, ինչպես նաև դրանց և շուկայի բնականոն աշխատանքի ապահովման համար անհրաժեշտ մեխանիզմները.
  - 5) **Ֆորս-մաժոր**՝ արտակարգ և անկանխելի դեպքեր և հանգամանքներ, որոնք ստեղծվել են Լիցենզավորված անձի կամ քից անկախ, ներառյալ (սակայն չսահմանափակվելով դրանցով) բնական աղետները, բնության ուժերի արտասովոր ուժեղ դրսևորումները, ինչպես, օրինակ, ջրհեղեղները, երկրաշարժերը, փոթորիկները, պտտահողմերը, նաև սպառտաժային գործողություններ, ահաբեկչություններ, պատերազմներ, ապստամբություններ, հասարակական անկարգություններ, գործադուլներ, որոնք խոչընդոտում են Լիցենզավորված անձի գործունեությանը կամ հանգեցնում նրա ստանձնած ցանկացած պարտավորության կատարման ձգձգման կամ դադարեցման՝ հակառակ նրա կողմից գործադրված ջանքերի խուսափելու, թուլացնելու կամ վերացնելու այդ ուժերի ազդեցությունը:

**2. ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ**

2. Լիցենզիան ուժի մեջ է մտնում 2019 թվականի մարտի 27-ից:
3. Լիցենզիան գործում է մինչև 2036 թվականի սեպտեմբերի 30-ը, որից՝
  - 1) 2019 թվականի մարտի 27-ից մինչև 2021 թվականի սեպտեմբերի 30-ը կառուցման ժամանակահատվածն է,
  - 2) մինչև 2036 թվականի սեպտեմբերի 30-ը՝ էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության գործունեության իրականացման ժամանակահատվածն է:
4. Լիցենզիայի 3-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերով նախատեսված ժամանակահատվածը (ժամկետը) երկարաձգելու անհրաժեշտության դեպքում Լիցենզավորված անձը Հանձնաժողովի կողմից սահմանված կարգով և ժամկետներում հայտ է ներկայացնում Հանձնաժողով:

**3. ԼԻՑԵՆԶԱՎՈՐՎԱԾ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ ԻՐԱՎԱՆԱՑՆԵԼՈՒ ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՏԱՐԱԾՔԸ**

5. Լիցենզավորված գործունեության աշխարհագրական տարածքը Արցախի Հանրապետության Շահումյանի շրջանի Ծար համայնքի և պետական պահուստային ֆոնդի տարածքներն են:

**4. ԼԻՑԵՆԶԱՎՈՐՎԱԾ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԷՈՒԹՅՈՒՆԸ ԿԱԶՄՈՂ ԳՈՐԾԱՌՈՒՅՑՆԵՐԸ**

6. Լիցենզավորված անձին իրավունք է տրվում և պարտավորեցվում է Լիցենզիայով սահմանված ժամկետում կառուցել 4,961 մեգավատտ հաշվարկային հզորությամբ «Քարվաճառ» փոքր հիդրոէլեկտրակայանը, արտադրել էլեկտրական էներգիա (հզորություն) ու այն վաճառել Շուկայի կանոններով:

**5. ՓՈՔՐ ՀԻԴՐՈՒԷԼԵԿՏՐԱԿԱՅԱՆԻ ՏԵԼԵԿԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ ԵՎ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՎԱԾ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ ԻՐԱՎԱՆԱՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԸ**

7. Փոքր հիդրոէլեկտրակայանի տեխնիկատնտեսական ցուցանիշներն են՝

- 1) ջրառի և ջրահեռացման նիշերն են 1728,5 մետրից 1570,5 մետր:
- 2) հաշվարկային էլք՝ 4,5 խորանարդ մետր վայրկյանում:
- 3) ստատիկ ճնշում՝ 158,0 մետր:

4) փոքր հիդրոէլեկտրակայանի հաշվարկային հզորություն՝ 4,961 մեգավատտ:

8. Լիցենզիայի գործողության ընթացքում «Քարվաճառ» փոքր հիդրոէլեկտրակայանի տեխնիկատնտեսական ցուցանիշների փոփոխության դեպքում Լիցենզավորված անձը դիմում է Հանձնաժողով՝ ներկայացնելով համապատասխան հիմնավորող փաստաթղթեր:

9. «Քարվաճառ» փոքր հիդրոէլեկտրակայանի կառուցման ավարտից հետո էլեկտրական էներգիայի արտադրության գործունեությունն իրականացվելու է հետևյալ սարքավորումներով՝

- 1) զեներատորներ -1 հատ,
- 2) հիդրոտուրբիններ -1 հատ:

**6. ԼԻՑԵՆԶԱՎՈՐՎԱԾ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ**

10. Լիցենզավորված անձի գործունեությունը պետք է համապատասխանի «Էներգետիկայի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի, այլ օրենքների, Լիցենզիայի, Հանձնաժողովի կողմից ընդունված և այլ իրավական ակտերի պահանջներին:

11. Առանց Հանձնաժողովի հետ համաձայնեցնելու Լիցենզավորված անձն իրավունք չունի Լիցենզիայով սահմանված որևէ իրավունք և պարտականություն պայմանագրային կամ այլ հիմունքներով ամբողջովին կամ մասնակի օտարելու, զիջելու կամ այլ կերպ փոխանցելու մեկ այլ անձի:

12. Լիցենզիան չի կարող այլ անձանց օգտագործման տրվել, օտարվել կամ գրավադրվել, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

13. Լիցենզիայի գործողությունը չի տարածվում Լիցենզավորված անձի հետ համատեղ, այդ թվում՝ համատեղ գործունեության պայմանագրով գործունեություն իրականացնող այլ անձանց, ինչպես նաև Լիցենզավորված անձի մասնակցությամբ հիմնադրված կամ գործող իրավաբանական անձանց վրա:

14. Լիցենզավորված անձը լիցենզիա ունեցող մեկ այլ անձի 25 տոկոս և ավելի մաս կազմող բաժնետեր, փայատեր դառնալու կամ լիցենզիա ունեցող մեկ այլ անձի հետ միավորվելու գործարքի իրականացման օրվանից 15 աշխատանքային օր առաջ այդ մասին պարտավոր է գրավոր տեղեկացնել Հանձնաժողովին:

15. Լիցենզավորված անձի կանոնադրական կապիտալում 25 տոկոս և ավելի մասնակցություն ունեցող բաժնետերը կամ փայատերը նույն կամ մեկ այլ լիցենզավորված անձի 25 տոկոս և ավելի բաժնետոմս, բաժնեմաս ձեռք բերելու կամ փայամասնակցություն ունենալու, ինչպես նաև 25 տոկոս և ավելի բաժնետոմսեր վաճառելու գործարքի իրականացման օրվանից 15 աշխատանքային օր առաջ այդ մասին պարտավոր է գրավոր տեղեկացնել Հանձնաժողովին:

16. Լիցենզավորված գործունեության իրականացման համար անհրաժեշտ հիմնական գույքը վաճառելու կամ գույքի նկատմամբ իրավունքը որևէ այլ կերպ փոխանցելու օրվանից 15 աշխատանքային օր առաջ Լիցենզավորված անձն այդ մասին պարտավոր է գրավոր տեղեկացնել Հանձնաժողովին:

17. Լիցենզավորված անձի կողմից իրականացվող տնտեսական այլ գործունեությունը չպետք է վտանգի Լիցենզիայի պայմանների պատշաճ կատարումը:

18. Լիցենզավորված անձը պարտավոր է իրականացնել իր տնօրինության տակ գտնվող սարքավորումների շահագործումը, տեխնիկական սպասարկումը և նորոգումը՝ ապահովելով քաղաքացիների, սպասարկող անձնակազմի կյանքի և առողջության անվտանգությունը:

19. Լիցենզավորված անձը պարտավոր է ապահովել լիցենզավորված գործունեության ընթացքում օգտագործվող սարքավորումների համապատասխանությունը Արցախի Հանրապետությունում գործող տեխնիկական կանոնակարգերին և Լիցենզիայում նախատեսված պայմաններին:

20. Լիցենզավորված անձը պարտավոր է ապահովել լիցենզավորված գործունեության մեջ ներգրավված շենքերի, շինությունների, ինժեներական կառույցների, էներգատեղակայանքների և զծերի մատչելիությունը Հանձնաժողովի և օրենքով սահմանված այլ մարմինների ներկայացուցիչների համար:

21. Բացառությամբ հարկային պարտավորությունների վերաբերյալ իրավասու մարմինների կողմից իրականացված ստուգումների եզրակացությունների (ակտերի), Լիցենզավորված անձը պարտավոր է Հանձնաժողով ներկայացնել իրավասու մարմինների ստուգման եզրակացությունները (ակտերը)՝ եզրակացությունների (ակտերի) ստացման պահից 23 աշխատանքային օրվա ընթացքում:

22. Լիցենզավորված անձը պարտավոր է Հանձնաժողովի կողմից առաջադրված ծրագրով և ժամկետներում իրականացնել տեխնիկական աուդիտ՝ Հանձնաժողովի հետ համաձայնեցված անկախ փորձագետների ներգրավմամբ: Աուդիտի հետ կապված ծախսերը կատարվում են Լիցենզավորված անձի կողմից:

23. Լիցենզավորված անձը պարտավոր է Հանձնաժողովի կողմից սահմանված կարգերին և ձևերին համապատասխան լիցենզավորված գործունեության մասին տեղեկատվություն և հաշվետվություններ ներկայացնել Հանձնաժողով:

24. Լիցենզավորված անձը պատասխանատվություն է կրում Հանձնաժողով ներկայացրած լիցենզավորված գործունեության մասին հաշվետվությունների և այլ տեղեկատվության հավաստիության համար:

25. Լիցենզավորված գործունեության հաշվապահական հաշվառումը պետք է առանձնացված լինի Լիցենզավորված անձի կողմից իրականացվող այլ գործունեության հաշվապահական հաշվառումից:

26. Լիցենզավորված անձի կողմից Հանձնաժողով ներկայացված տեղեկատվությունները հրապարակային են, եթե դրանք Լիցենզավորված անձի կողմից չեն համարվում գաղտնի և նշված չեն որպես «ընկերությանը վերաբերող գաղտնապահական տեղեկատվություն»: Լիցենզավորված անձն իրավունք ունի ապացուցելու, որ իր ներկայացրած տվյալների (ներառյալ՝ «ընկերությանը վերաբերող գաղտնապահական տեղեկատվության») հրապարակումը կարող է վնասել ընկերության մրցակցային գործունեության շահերին: Հանձնաժողովն իրավասու է ընդունելու կամ մերժելու նման տեղեկատվության չհրապարակման վերաբերյալ Լիցենզավորված անձի խնդրանքը:

27. Այն դեպքում, երբ Հանձնաժողովն ուսումնասիրում է Լիցենզավորված անձի կամ այլ անձանց կողմից ներկայացված որևէ հայտ, հարցադրում կամ դիմում-բողոք, մամուլում կամ զանգվածային լրատվության այլ միջոցներով հաղորդագրություն կամ տեղեկատվություն, Լիցենզավորված անձը, Հանձնաժողովի պահանջով, պարտավոր է ներկայացնել սպառիչ տեղեկատվություն:

28. Լիցենզավորված անձը պարտավոր է տասն աշխատանքային օրվա ընթացքում պատասխանել Հանձնաժողովի գրավոր հարցադրումներին, եթե Հանձնաժողովի կողմից այլ ժամկետներ սահմանված չեն:

29. Լիցենզավորված անձը ոչ ուշ, քան մինչև 2019 թվականի հոկտեմբերի 31-ը, պարտավոր է Հանձնաժողով ներկայացնել «Քարվաճառ» փոքր հիդրոէլեկտրակայանի կառուցման նախագիծը և նախահաշիվը, նախագծի տեխնիկական և Արցախի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերում շրջակա միջավայրի ազդեցության փորձաքննությունները, ինչպես նաև Հանձնաժողովի կողմից սահմանված՝ էլեկտրաէներգետիկական համակարգին էլեկտրաէներգիա արտադրող կայանների միանալու կարգի համաձայն ստացված՝

էլեկտրական էներգիայի բաշխման ցանցին միանալու տեխնիկական պայմանների պատճենը:

30. Լիցենզավորված անձը մինչև Լիցենզիայի 3-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսված ժամկետի ավարտը պարտավոր է կատարել կարգաբերման-գործարկման աշխատանքներ՝ համաձայն Արցախի Հանրապետության օրենսդրության և առաքել էլեկտրական էներգիան էլեկտրական էներգիայի (հզորության) բաշխման լիցենզիա ունեցող անձին:

31. Լիցենզավորված անձը պարտավոր է մինչև Լիցենզիայով սահմանված կառուցման ժամանակահատվածի ավարտը Հանձնաժողով ներկայացնել փոքր հիդրոէլեկտրակայանի կառուցման ավարտը հավաստող Հանձնաժողովի սահմանած կարգով պահանջվող փաստաթղթերը և Շուկայի կանոններով սահմանված կարգով էլեկտրական էներգիայի (հզորության) վաճառքի մտադրության դեպքում՝ սակագնի սահմանման հայտ:

32. Լիցենզավորված անձի կողմից առաքվող էլեկտրաէներգիայի (հզորության) վաճառքի սակագները սահմանում է Հանձնաժողովը: Սակագների սահմանումն ու վերանայումն իրականացվում է Հանձնաժողովի կողմից սահմանված կարգով:

33. Լիցենզիայի 6-րդ կետում նշված հզորության մասնակի տեղադրման դեպքում Լիցենզավորված անձն իրավունք ունի Հանձնաժողով ներկայացնելու այդ մասով փոքր հիդրոէլեկտրակայանի կառուցման ավարտը հավաստող Հանձնաժողովի սահմանած կարգով պահանջվող փաստաթղթերը և Շուկայի կանոններով սահմանված կարգով էլեկտրական էներգիայի (հզորության) վաճառքի մտադրության դեպքում՝ սակագնի սահմանման հայտ:

34. Լիցենզավորված անձի և էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզիա ունեցող այլ անձանց միջև կնքված էներգամատակարարման և ծառայությունների մատուցման պայմանագրերը պետք է համապատասխանեն Հանձնաժողովի սահմանած պայմանագրերի օրինակելի ձևերին կամ պարտադիր պայմաններին: Այդ պայմանագրերն ուժի մեջ են մտնում Հանձնաժողովում գրանցվելու պահից:

35. Լիցենզավորված անձը պարտավոր է Հանձնաժողովին անմիջապես հայտնել այն հանգամանքների մասին, որոնք հանգեցրել կամ կարող են հանգեցնել Լիցենզիայի պայմանների խախտումների:

36. Լիցենզավորված անձը պարտավոր է կատարել Համակարգի օպերատորի օպերատիվ իրահանգները՝ ըստ Հանձնաժողովի կողմից հաստատված կարգի և նրանց հետ կնքված պայմանագրի դրույթների:

37. Լիցենզավորված անձը պարտավոր է աջակցել Համակարգի օպերատորի կողմից իրականացվող էլեկտրական ցանցի հուսալիությունն ու անվտանգությունն ապահովող, Լիցենզավորված անձի սեփականությունը հանդիսացող պաշտպանիչ սարքերի, կարգավորիչների գնումներին, օրենսդրությամբ և այլ իրավական ակտերով ու պայմանագրերով սահմանված կարգով ապահովել այդ սարքերի շահագործումը, կատարել դրանց նորոգման, փոխարինման և այլ անհրաժեշտ աշխատանքներ, ինչպես նաև աջակցել իր տնօրինության տակ գտնվող այլ Անձանց սեփականությունը հանդիսացող պաշտպանիչ սարքերի, կարգավորիչների գնման իրականացմանը:

## **7. ԼԻՑԵՆԶԱՎՈՐՎԱԾ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՒՄ**

38. Լիցենզիայի պայմանների պահպանման վերահսկումն իրականացնում է Հանձնաժողովը:

39. Լիցենզիայի պայմանների պահպանման վերահսկումն ապահովելու նպատակով Հանձնաժողովը և նրա կողմից լիազորված ներկայացուցիչներն ունեն ազատ մուտքի իրավունք Լիցենզավորված անձի տարածք:

40. Լիցենզավորված անձը վերահսկման իրականացման ընթացքում պետք է լիովին համագործակցի և աջակցի Հանձնաժողովին կամ նրա կողմից լիազորված ներկայացուցչին:

41. Հանձնաժողովի կողմից լիազորված ներկայացուցիչները Լիցենզավորված անձի տարածքում պահպանում են ներքին կանոնակարգը և Արցախի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված նորմերը:

## 8. ՏՈՒԺԱՆՔՆԵՐԸ

42. Լիցենզավորված անձի կողմից «Էներգետիկայի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի դրույթները, Հանձնաժողովի ընդունած իրավական ակտերը, Լիցենզիայի պայմանները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքերում Հանձնաժողովն իրավասու է տալու խախտումները վերացնելու վերաբերյալ հանձնարարականներ և կարող է կիրառել տուժանքների հետևյալ տեսակները՝

1) նախազգուշացում.

2) «Էներգետիկայի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքով սահմանված տուգանքներ.

3) Լիցենզիայի գործողության կասեցում.

4) Լիցենզիայի գործողության դադարեցում:

43. Լիցենզավորված անձի կամ Հանձնաժողովի նախաձեռնությամբ Լիցենզիայի գործողությունը դադարեցնելու դեպքում Հանձնաժողովը և Լիցենզավորված անձը ղեկավարվում են «Էներգետիկայի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքով և Արցախի Հանրապետության օրենսդրությամբ:

44. Լիցենզավորված անձը չի ենթարկվում պատասխանատվության՝ Լիցենզիայի 42-րդ կետի համաձայն, եթե նրա գործունեության մեջ արձանագրված խախտումները Ֆորս-մաժորի հետևանք են:

## 9. ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ՓՈՓՈՒՍՈՒԹՅՈՒՆԸ

45. Լիցենզիայում փոփոխություններ կարող են կատարվել Լիցենզավորված անձի կամ Հանձնաժողովի նախաձեռնությամբ՝ Հանձնաժողովի կողմից սահմանված կարգով:

46. Լիցենզավորված անձի վերակազմակերպման կամ նրա անվանման կամ գտնվելու վայրի փոփոխման դեպքում Լիցենզավորված անձը պարտավոր է այդ փոփոխություններն իրավական ուժ ստանալու օրվանից սկսած տասնհինգ օրյա ժամկետում հայտ ներկայացնել Հանձնաժողով՝ Լիցենզիայի վերաձևակերպման համար:

Ի վկայություն սույնի, Արցախի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովը սույն Լիցենզիան տրամադրել է՝

«Արցախ ՀԷԿ» բազ բաժնետիրական ընկերությանը.

(ընկերության անվանումը)

ԱՀ, ք. Ստեփանակերտ, Վ. Սարգսյան 25<sup>ա</sup>.

(գտնվելու վայրը)

Գործունեության վայրը՝

Արցախի Հանրապետության Շահումյանի շրջանի Ծար համայնքի և պետական պահուստային ֆոնդի տարածքներն են:

ԱՐՑԱՄԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ  
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ  
ՄՐՑԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՊԵՏԱԿԱՆ  
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱԵՆԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱԿԱՐ

Հ. ԹՈՐՈՍՅԱՆ

ԱՐՑԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԱՌՈՂՋ ԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

«22» փետրվարի 2019թ.

N 48-Ա

ք.Ստեփանակերտ

**«ԷՄՊԱՏԻԱ» ՍԱՀՄԱՆԱՓՈՎ ԴԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱԲ  
ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ  
ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԼԻՑԵՆԶԻԱ ՏԱՆՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Լիցենզավորման մասին» Լեռնային Ղարաբաղի  
Հանրապետության օրենքի 8-րդ, 9-րդ, 26-րդ հոդվածների և 43-րդ հոդվածի  
2-րդ մասի աղյուսակի 3-րդ բաժնի 3-րդ կետի պահանջներով՝

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ ԵՄ

1. «ԷՄՊԱՏԻԱ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության  
(հասցե՝ Արցախի Հանրապետություն, քաղաք Ստեփանակերտ, Հեքիմյան  
9/74) բժշկական օգնության և սպասարկման համար լիցենզիա տրամադրելու  
վերաբերյալ հայտը բավարարել և տրամադրել **«ընտանեկան  
ստոնատողոցիական»** գործունեություն իրականացնելու լիցենզիա, բժշկական  
օգնության և սպասարկման ձևը՝ **արտահիվանդանոցային**։

2. Արցախի Հանրապետության առողջապահության նախարարության  
աշխատակազմի իրավաբանական և լիցենզավորման բաժնի վարիչ Լ.  
Հովհաննիսյանին՝

1) գրանցել տրված լիցենզիայի մասին տեղեկությունը  
համապատասխան գրանցամատյանում.

2) եռօրյա ժամկետում ապահովել սույն հրամանի առաքումը  
գերատեսչական նորմատիվ ակտերը հրապարակող մարմնին և  
հայտատուին։

Ա.ԲԱՂՈՅԱՆ



ԱՐՑԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԱՌՈՂՋ ԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

«22» փետրվարի 2019թ.

N 49-Ա

ք.Ստեփանակերտ

**«ՀԻՍՏՈՋԵՆ» ՊԱԹՈՒՈՒԳԻԱՅԻ ԳԻՏԱԳՈՐԾՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ  
ՍԱՀՄԱՆԱՓՈՒԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԱՐՑԱՆԻ  
ՄԱՍՆԱՃՅՈՒԴԻՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ  
ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԼԻՑԵՆԶԻԱ ՏԱՆՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Լիցենզավորման մասին» Լեռնային Ղարաբաղի  
Հանրապետության օրենքի 8-րդ, 9-րդ, 26-րդ հոդվածների և 43-րդ հոդվածի  
2-րդ մասի աղյուսակի 3-րդ բաժնի 3-րդ կետի պահանջներով.

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ ԵՄ

1. «ՀԻՍՏՈՋԵՆ» ՊԱԹՈՒՈՒԳԻԱՅԻ ԳԻՏԱԳՈՐԾՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ  
ՍԱՀՄԱՆԱՓՈՒԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԱՐՑԱՆԻ  
ՄԱՍՆԱՃՅՈՒԴԻՆ (հասցե՝ Արցախի Հանրապետություն, քաղաք  
Ստեփանակերտ, Մկրտչյան 4/6) բժշկական օգնության և սպասարկման  
համար լիցենզիա տրամադրելու վերաբերյալ հայտը բավարարել և  
տրամադրել *«լաբորատոր-ախտորոշիչ (բջջաբանական)»* գործունեություն  
իրականացնելու լիցենզիա, բժշկական օգնության և սպասարկման ձևը՝  
*արտահիվանդանոցային:*

2. Արցախի Հանրապետության առողջապահության նախարարության  
աշխատակազմի իրավաբանական և լիցենզավորման բաժնի վարիչ  
Լ.Հովհաննիսյանին՝

1) գրանցել տրված լիցենզիայի մասին տեղեկությունը  
համապատասխան գրանցամատյանում.

2) եռօրյա ժամկետում ապահովել սույն հրամանի առաքումը  
գերատեսչական նորմատիվ ակտերը հրապարակող մարմնին և  
հայտատուին:

Ա. ԲԱՂՈՅԱՆ

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԱՌՈՂՋ ԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ**

**Հ Ր Ա Մ Ա Ն**

«22» փետրվարի 2019թ.

N 50-Ա

ք.Ստեփանակերտ

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱՔԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋ ԱՊԱՀՈՒԹՅԱՆ  
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «ԻՆՖԵԿՏԻՈՆ ՀԻՎԱՆԴԱՆՈՑ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ  
ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿԱՆ  
ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՏՐՎԱԾ ԼԻՑԵՆԶԻԱՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ  
ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Լիցենզավորման մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 20-րդ, 21-րդ հոդվածները, 37-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը և Արցախի Հանրապետության կառավարության 2018 թվականի սեպտեմբերի 18-ի N 781-Ն որոշումը՝

**Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ ԵՄ**

1. Ուժը կորցրած ճանաչել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության առողջապահության նախարարության կողմից 2004 թվականի դեկտեմբերի 17-ին բժշկական օգնության և սպասարկման համար Լեռնային Ղարաբաղի Հանրապետության առողջապահության նախարարության «Ինֆեկցիոն հիվանդանոց» փակ բաժնետիրական ընկերությանը տրված թիվ Կ-XX-000045 լիցենզիան:

2. Արցախի Հանրապետության առողջապահության նախարարության աշխատակազմի իրավաբանական և լիցենզավորման բաժնի վարիչ Լ.Հովհաննիսյանին՝

1) ապահովել լիցենզիայի դադարեցման մասին տեղեկության գրանցումը համապատասխան գրանցամատյանում.

2) Լեռնային Ղարաբաղի Հանրապետության առողջապահության նախարարության «Ինֆեկցիոն հիվանդանոց» փակ բաժնետիրական ընկերության լիցենզիայի բնօրինակը կցել նրա անհատական գործին.

3) եռօրյա ժամկետում ապահովել սույն հրամանի առաքումը գերատեսչական նորմատիվ ակտերը հրապարակող մարմնին:

**Ա. ԲԱՂՈՅԱՆ**

**ԱՐՑԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ**

**Հ Ր Ա Մ Ա Ն**

«22» փետրվարի 2019թ.

N 51-Ա

ք.Ստեփանակերտ

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱՔԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ  
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «ԱՐԵՎԻԿ» ՄԱՆԿԱԿԱՆ ԲՈՒԺՄԻԱԿՈՐՈՒՄ ՓԱԿ  
ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԵՎ  
ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՏՐՎԱԾ ԼԻՑԵՆԶԻԱՆ ՈՒԺ  
ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Լիցենզավորման մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 20-րդ, 21-րդ հոդվածները, 37-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետը և «Արևիկ» բուժմիավորում փակ բաժնետիրական ընկերության տնօրենի 2019 թվականի փետրվարի 21-ի դիմումը՝

**Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ ԵՄ**

1. Ուժը կորցրած ճանաչել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության առողջապահության նախարարության կողմից 2015 թվականի ապրիլի 28-ին բժշկական օգնության և սպասարկման համար Լեռնային Ղարաբաղի Հանրապետության առողջապահության նախարարության «Արևիկ» մանկական բուժմիավորում փակ բաժնետիրական ընկերությանը տրված թիվ Ա-XX-000283 լիցենզիան:

2. Արցախի Հանրապետության առողջապահության նախարարության աշխատակազմի իրավաբանական և լիցենզավորման բաժնի վարիչ Լ.Հովհաննիսյանին՝

1) ապահովել լիցենզիայի դադարեցման մասին տեղեկության գրանցումը համապատասխան գրանցամատյանում.

2) Լեռնային Ղարաբաղի Հանրապետության առողջապահության նախարարության «Արևիկ» մանկական բուժմիավորում փակ բաժնետիրական ընկերության լիցենզիայի բնօրինակը կցել նրա անհատական գործին.

3) եռօրյա ժամկետում ապահովել սույն հրամանի առաքումը գերատեսչական նորմատիվ ակտերը հրապարակող մարմնին և հայտատուին:

**Ա.ԲԱՂՈՅԱՆ**

ԱՐՑԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԱՌՈՂՋ ԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

«22» փետրվարի 2019թ.

N 52-Ա

ք.Ստեփանակերտ

**«ԱՐԵՎԻԿ» ԲՈՒԺՄԻԱՎՈՐՈՒՄ ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ  
ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿԱՆ  
ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԼԻՑԵՆԶԻԱ ՏԱՆՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Լիցենզավորման մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 8-րդ, 9-րդ, 26-րդ հոդվածների և 43-րդ հոդվածի 2-րդ մասի աղյուսակի 3-րդ բաժնի 3-րդ կետի պահանջներով՝

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ ԵՄ

1. «Արևիկ» բուժմիավորում փակ բաժնետիրական ընկերության (հասցե՝ Արցախի Հանրապետություն, քաղաք Ստեփանակերտ, Մկրտչյան 4) բժշկական օգնության և սպասարկման համար լիցենզիա ստանալու վերաբերյալ հայտը բավարարել և տալ *մանկաբուժական, նեոնատոլոգիական, մանկական վերակենդանացման, մանկական վիրաբուժական, մանկական վնասվածքաբանական, մանկական անեսթեզիոլոգիական, մանկական քիթ-կոկորդ-ականջաբանական, մանկական ներզատաբանական, մանկական նյարդաբանական, մանկական գինեկոլոգիական, մանկական ակնաբանական, մանկական երիկամաբանական, մանկական սրտաբանական, մանկական աղեստամոքսաբանական, մանկական վարակիչ հիվանդությունների, մանկական թերապևտիկ ստոմատոլոգիական, դիմաճնոտային վիրաբուժական, միկրովիրաբուժական, ուրոլոգիական, ալերգոլոգիական, ռևմատոլոգիական, ֆիզիոթերապևտիկ (էլեկտրաբուժում, լուսաբուժում), ֆունկցիոնալ ախտորոշիչ, ճառագայթային ախտորոշիչ (ռենտգենաբանական, ուլտրաձայնային), լաբորատոր-ախտորոշիչ (կլինիկական, իմունաբանական, կենսաքիմիական), վարակիչ հիվանդությունների, կլինիկական դեղորայքային* գործունեություն իրականացնելու լիցենզիա, բժշկական օգնության և սպասարկման ձևը՝ *հիվանդանոցային և արտահիվանդանոցային*:

2. Արցախի Հանրապետության առողջապահության նախարարության աշխատակազմի իրավաբանական և լիցենզավորման բաժնի վարիչ Լ. Հովհաննիսյանին՝

1) գրանցել տրված լիցենզիայի մասին տեղեկությունը համապատասխան գրանցամատյանում.

2) եռօրյա ժամկետում ապահովել սույն հրամանի առաքումը գերատեսչական նորմատիվ ակտերը հրապարակող մարմնին և հայտատուին:

Ա. ԲԱՐՈՅԱՆ

ԱՐՑԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

«04» մարտի 2019թ.

N 53

ք.Ստեփանակերտ

**ԲՈՒՅՍԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՔԻՄԻԱԿԱՆ ԵՎ ԿԵՆՍԱԲԱՆԱԿԱՆ  
ՄԻՋՈՑՆԵՐԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԵՎ (ԿԱՄ) ՎԱՃԱՌՔԻ ԼԻՑԵՆԶԻԱ  
ՏՐԱՍՎՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Լիցենզավորման մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 20-րդ, 22-րդ և 26-րդ հոդվածների դրույթներով և հիմք ընդունելով Արցախի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության լիցենզավորման հանձնաժողովի 2019 թվականի մարտի 7-ի N02 եզրակացությունը ու անհատ ձեռնարկատեր Լիանա Դավթյան Դավթի 2019 թվականի մարտի 1-ին ներկայացրած լիցենզիա ստանալու մասին հայտը՝

**ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ**

1. Բավարարել անհատ ձեռնարկատեր Լիանա Դավթյան Դավթի հայտն ու տրամադրել բույսերի պաշտպանության քիմիական և կենսաբանական միջոցների արտադրության և (կամ) վաճառքի լիցենզիա:

2. Արցախի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության աշխատակազմի իրավաբանական բաժնին՝

1) գրանցել տրված լիցենզիայի մասին տեղեկությունը համապատասխան գրանցամատյանում.

2) ապահովել սույն հրամանի առաքումը Արցախի Հանրապետության արդարադատության նախարարություն՝ հրապարակման համար:

Ժիրայր Միրզոյան

**ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ**  
**ԱՐՑԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ԵՎ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՐՄԻՑ**  
**ՓԵՏՐՎԱՐ ԱՄՍՈՒՄ ՏՐԱՄԱԴՐՎԱԾ, ԴԱՂԱՐԵՑՎԱԾ ԵՎ ԿԱՍԵՑՎԱԾ ԼԻՑԵՆԶԻԱՆԵՐԻ ՄԱՍԻՆ**

11.03.2019թ.

h/h	Լիցենզավորված անձի անվանումը կամ անունը, ազգանունը	Լիցենզիայի		Գործունեության		Լիցենզիայի գործողության ժամկետը	Ծանոթություն
		համարը	տրման ամսաթիվը	տեսակը	իրականացման վայրը		
<b>ՏՐԱՄԱԴՐՈՒՄ</b>							
1	Անդրանիկ Նիկոլայի Դանիելյան (ֆիզիկական անձ)	SՇՆ0070 5	01.02.2019թ.	Մեկ մարդատար-տաքսի ավտոմոբիլով ուղևորափոխադրումների կազմակերպում	ԱՀ	անժամկետ	
2	Կարմեն Կարենի Մարգարյան (ֆիզիկական անձ)	SՇՆ0070 6	01.02.2019թ.		ԱՀ	անժամկետ	
3	Գեղամ Հենրիկի Մնացականյան (ֆիզիկական անձ)	SՇՆ0070 7	01.02.2019թ.		ԱՀ	անժամկետ	
4	Արթուր Ավետիսի Եզանյան (ֆիզիկական անձ)	SՇՆ0070 8	25.02.2019թ.		ԱՀ	անժամկետ	
5	Հրայր Յուրիի Պետրոսյան (ֆիզիկական անձ)	SՇՆ0070 9	25.02.2019թ.		ԱՀ	անժամկետ	
6	Կարեն Թոֆիկի Ալավերդյան (ֆիզիկական անձ)	SՇՆ0071 0	25.02.2019թ.		ԱՀ	անժամկետ	
<b>ԴԱՂԱՐԵՑՈՒՄ</b>							
7	ԱԶ Գավրուշա Ալլահվերդյան	SՇՆ0004 7	23.12.2009թ.	Մեկ մարդատար-տաքսի ավտոմոբիլով ուղևորափոխադրումների կազմակերպում	ԱՀ	անժամկետ	դադարեցվել է 30.01.2019թ.
8	ԱԶ Կամո Փաշայան	SՇՆ0045 4	09.12.2015թ.		ԱՀ	անժամկետ	դադարեցվել է 25.02.2019թ.
9	ԱԶ Վարուժան Շմավոնի Հովհաննիսյան	SՇՆ0053 0	19.01.2017թ.		ԱՀ	անժամկետ	դադարեցվել է 25.02.2019թ.
10	Հարութ Ալեքսանդրի Հայրապետյան (ֆիզիկական անձ)	SՇՆ0065 6	16.07.2018թ.		ԱՀ	անժամկետ	դադարեցվել է 25.02.2019թ.
<b>ԿԱՍԵՑՈՒՄ</b>							
11	ԱԶ Կամո Աղաջանյան	SՇՆ0015 6	14.12.2011թ.	Մեկ մարդատար-տաքսի ավտոմոբիլով ուղևորափոխադրումների կազմակերպում	ԱՀ	անժամկետ	կասեցումը հանվել է 05.02.2019թ.
12	ԱԶ Դարիթ Գրիգորյան	SՇՆ0026 6	07.02.2013թ.		ԱՀ	անժամկետ	կասեցումը հանվել է 23.02.2019թ.
13	ԱԶ Ռաֆայել Եսայան	SՇՆ0027 0	07.02.2013թ.		ԱՀ	անժամկետ	կասեցվել է 07.02.2019թ.

14	ԱԶ Մարատ Հայրապետյան	SՇՈ0027 5	28.02.2013թ.		ԱՀ	անժամկետ	կասեցվել է 28.02.2019թ.
15	ԱԶ Գայանե Պետրոսյան	SՇՈ0034 5	27.01.2014թ.	Մարդատար-տաքսի ավտոմոբիլներով ուղևորափոխադրումների կազմակերպում	ԱՀ	անժամկետ	կասեցումը հանվել է 02.03.2019թ.
16	ԱԶ Ռուդիկ Սարգսյան	SՇՈ0034 9	11.02.2014թ.	Մեկ մարդատար-տաքսի ավտոմոբիլով ուղևորափոխադրումների կազմակերպում	ԱՀ	անժամկետ	կասեցվել է 11.02.2019թ.
17	ԱԶ Արթուր Պետրոսյան	SՇՈ0035 4	28.02.2014թ.		ԱՀ	անժամկետ	կասեցվել է 28.02.2019թ.
18	Վիտալի Սլավի Սամսոնյան (ֆիզիկական անձ)	SՇՈ0043 0	17.02.2015թ.		ԱՀ	անժամկետ	կասեցվել է 17.02.2019թ.
19	ԱԶ Հովիկ Ծատրյան	SՇՈ0043 2	17.02.2015թ.		ԱՀ	անժամկետ	կասեցվել է 17.02.2019թ.
20	Արկադի Շամխալի Բալայան (ֆիզիկական անձ)	SՇՈ0047 5	15.02.2016թ.		ԱՀ	անժամկետ	կասեցվել է 15.02.2019թ.
21	Նորայր Վալերիի Սարգսյան (ֆիզիկական անձ)	SՇՈ0047 6	15.02.2016թ.		ԱՀ	անժամկետ	կասեցվել է 15.02.2019թ.
22	Գագիկ Գենադիի Դանիելյան (ֆիզիկական անձ)	SՇՈ0047 7	15.02.2016թ.		ԱՀ	անժամկետ	կասեցվել է 15.02.2019թ.
23	Իգոր Արծվիկի Ծատրյան (ֆիզիկական անձ)	SՇՈ0053 4	31.01.2017թ.		ԱՀ	անժամկետ	կասեցումը հանվել է 08.02.2019թ.
24	Վարդան Հովհաննեսի Առաքելյան (ֆիզիկական անձ)	SՇՈ0053 5	16.02.2017թ.		ԱՀ	անժամկետ	կասեցվել է 16.02.2019թ.
25	«ՏԱՔՍԻ ՆԻԿՈ» ՍՊԸ	SՇՈ0059 5	14.02.2018թ.		Մարդատար-տաքսի ավտոմոբիլներով ուղևորափոխադրումների կազմակերպում	ԱՀ	անժամկետ
26	ԱԶ Մարատ Պետրոսյան	SՇՈ0059 6	14.02.2018թ.	Մեկ մարդատար-տաքսի ավտոմոբիլով ուղևորափոխադրումների կազմակերպում	ԱՀ	անժամկետ	կասեցվել է 14.02.2019թ.

**Տ Ե Ղ Ե Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն Ն Ե Ր**  
**2019 թվականի հունվար ամսվա համար**

**ԼՂՀ քաղաքաշինության նախարարություն**

NN	Ֆիզիկական.անձանց /անուն, ազգանուն/, բնակության վայրը իրավաբանական անձանց /անվանումը/, գտնվելու վայրը	ՀՎՀՀ	Լիցենզ. համար	Լիցենզ. տալու ամսաթ.	Գործողության տեսակը	Գործուն. իրական. վայրը	Գործող. ժամկետը	Պետական տուրքի առաջին վճարման ամսաթիվը	Ծանոթ.
1	«ՆԱՑԻՈՆԱԼ» ՍՊԸ ք. Ստեփ, Ն. Ստեփանյան 9ա/2	9003577 1	ՇԻ-1064	18.01.2019	Շինարարության իրականացում, ըստ հետևյալ ոլորտի՝ <i>բնակելի, հասարակական և արտադրական</i>	ԼՂՀ տարածքում	Անժամկետ	16.01.2019	
2			ՔՓՄ-1065		Քաղաքաշինական փաստաթղթերի մշակում, ըստ հետևյալ ոլորտի՝ <i>բնակելի, հասարակական և արտադրական</i>	ԼՂՀ տարածքում	Անժամկետ		
3	«ԱՏՐՈՅՍՈՆՏԱՍՏ» ՍՊԸ ք. Ստեփ, Դավիթ Բեկի փող. շենք 3 բն. 1	9003389 6	ՔՓՄ-1066	25.01.2019	Քաղաքաշինական փաստաթղթերի մշակում, ըստ հետևյալ ոլորտի՝ <i>էներգետիկ</i>	ԼՂՀ տարածքում	Անժամկետ	18.01.2019	



Տ Ե Ղ Ե Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն Ն Ե Ր  
2019 թվականի հունվար ամսվա համար

ԼՂՀ քաղաքաշինության նախարարություն

NN	Լիցենզավորված, թույլտվություն, արտոնագիր ունեցող անձի		Լիցենզիայի սերիան և համարը	Լիցենզավորված գործունեության տեսակը	Լիցենզիայի վերաձևակերպում		Լիցենզիայի գործողությունն ժամկետի երկարաձգում (նշել երկարաձգված ժամանակահատվածի ավարտումն ամսաթիվը)	Լիցենզիայի, թույլտվության արտոնագրի գործողության կատեգորիա		Լիցենզիայի գործունեությունը դադարեցնելու կամ թույլտվությունը, արտոնագիրը կասեցնելու ամսաթիվը
	Անվանումը	ՀՎՀՀ			Որոշման ամսաթիվը	Նոր անվանումը		կատեգորիա	Միջևնապատկերում	
1.	2.	3.	4.	5.	6.	7.	8.	9.	10.	11.
1	«ԱՐՑԱԽԳԱԶ» ՓԲԸ ք.Ստեփ., Տիգրան Մեծի 44	90010189	ՇԻ-145	Շինարարության իրականացում, ըստ հետևյալ ոլորտի՝ <i>էներգետիկ</i>				08.01.2019		
2	«Ճարտնախագիծ» ՍՊԸ ք.Ստեփ., Հեքիմյան 16	90002338	ՔՓՄ-151	Քաղաքաշինական փաստաթղթերի մշակում ըստ հետևյալ ոլորտի՝ <i>բնակելի, հասարակական և արտադրական</i>				08.01.2019		
3	«ՇԻՆ-ՔԱՐ» ՍՊԸ ԼՂՀ Մարտունու շրջ., գ. Գիշի	90213761	ՇԻ-588	Շինարարության իրականացում, ըստ հետևյալ ոլորտի՝ <i>բնակելի, հասարակական և արտադրական</i>				16.01.2019		
4	«Դավիթ Սահակյան» ԱԶ ք.Ստեփ., Հեքիմյան փող. շենք 14ա/6	90468038	ՔՓՄ-963	Քաղաքաշինական փաստաթղթերի մշակում, ըստ հետևյալ ոլորտի՝ <i>բնակելի, հասարակական և արտադրական</i>				20.01.2019		
5	«ՍՈՒԽՆԻԴ» ՍՊԸ ք.Ստեփ.,	90037915	ՔՓՄ-	Քաղաքաշինական				12.01.2019		

	Ադմ. Իսակով շ. 2 <sup>բ</sup> , բն. 21		1008	փաստաթղթերի մշակում, ըստ հետևյալ ոլորտի <i>հիդրոտեխնիկական</i>						
6	«ԹԱՐԹԱՐ ԷՆԵՐՋԻ» ՍՊԸ ք. Ստեփ., Հեքիմյան փողոց 14 <sup>ա</sup> , բն. 19	90034744	ՇԻ - 1009	Շինարարության իրականացում, ըստ հետևյալ ոլորտի <i>հիդրոտեխնիկական</i>				26.01.2019		
7	«ԿՈՆՏԻՆԵՆՏ» ՍՊԸ ք. Ստեփ., Հեքիմյան փողոց, 14ա/19	90035755	ՇԻ- 959	Շինարարության իրականացում, ըստ հետևյալ ոլորտի <i>հիդրոտեխնիկական</i>				09.12.2018		
8	«ՖՈՐՈՒՄ» ՍՊԸ ք. Ստեփ. Լուսավորիչ 3	90021442	ՔՓՄ- 311	Քաղաքաշինության փաստաթղթերի մշակում, ըստ հետևյալ ոլորտի՝ <i>բնակելի, հասարակական և արտադրական</i>				21.01.2019		
9	«Հայր և որդի Մուսայեյաններ» ՍՊԸ ք. Մարտունի «Կարվին» տեղամաս	90212356	ՇԻ- 852	Շինարարության իրականացում, ըստ հետևյալ ոլորտի՝ <i>էներգետիկ</i>				21.02.2019		
10	«Քարավան» ՍՊԸ ԼՂՀ Ասկերանի շրջան գ. Բերքաձոր	90012365	ՇԻ- 809	Շինարարության իրականացում, ըստ հետևյալ ոլորտի՝ <i>բնակելի, հասարակական և արտադրական</i>				21.12.2018		
11	«Զրային Տնտեսություն» ՓԲԸ ք.Ստեփ. Նաբերեժնայա 13	90006038	ՇԻ- 153	Շինարարության իրականացում, ըստ հետևյալ ոլորտի <i>հիդրոտեխնիկական</i>						18.01.2019 (դիմում առ 14.01.2019)

**Տ Ե Ղ Ե Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն Ն Ե Ր**  
**2019 թվականի փետրվար ամսվա համար**

**ԼՂՀ քաղաքաշինության նախարարություն**

NN	Ֆիզիկական.անձանց /անուն, ազգանուն/, բնակության վայրը իրավաբանական անձանց /անվանումը/, գտնվելու վայրը	ՀՎՀՀ	Լիցենզ. համար	Լիցենզ. տալու ամսաթ.	Գործողության տեսակը	Գործուն. իրական. վայրը	Գործող. ժամկետը	Պետական տուրքի առաջին վճարման ամսաթիվը	Ծանոթ.
1	«ՔԱՆՈՆ» ՍՊԸ ԱՀ, Շահումյանի շրջան, գ. Նոր Վերինշեն	9004375 2	ՔՓՄ-1067	22.02.2019	Քաղաքաշինական փաստաթղթերի մշակում, ըստ հետևյալ ոլորտի՝ <i>բնակելի, հասարակական և արտադրական</i>	ԼՂՀ տարածքում	Անժամկետ	15.02.2019	
2	«ԹԻՄ» ՍՊԸ ք. Ստեփ, Ադմ. Իսակով փող. շ. 5/30	9004380 5	ՔՓՄ-1068	22.02.2019	Քաղաքաշինական փաստաթղթերի մշակում, ըստ հետևյալ ոլորտի՝ <i>բնակելի, հասարակական և արտադրական</i>	ԼՂՀ տարածքում	Անժամկետ	15.02.2019	
3	«ՖԼԱՈՒ» ՍՊԸ ք. Ստեփ, Ա. Մկրտչյան 13/11	9004384 8	ՇԻ-1069	22.02.2019	Շինարարության իրականացում, ըստ հետևյալ ոլորտի՝ <i>հիդրոտեխնիկական</i>	ԼՂՀ տարածքում	Անժամկետ	20.02.2019	
4	«ԼԵՎԵԼԷՆԵՐՁԻ» ՍՊԸ ԱՀ, Քաշաթաղի շրջան, գ. Ներքին Սուս	9300032 1	ՇԻ-1070	28.02.2019	Շինարարության իրականացում, ըստ հետևյալ ոլորտի՝ <i>հիդրոտեխնիկական</i>	ԼՂՀ տարածքում	Անժամկետ	19.02.2019	
5	«ՆԱԿ ԳՐՈՒՊ» ՍՊԸ ք. Ստեփ, Հեքիմյան փողոց, շենք 20/26	9004357 1	ՇԻ-1071	28.02.2019	Շինարարության իրականացում, ըստ հետևյալ ոլորտի՝ <i>բնակելի, հասարակական և արտադրական</i>	ԼՂՀ տարածքում	Անժամկետ	27.02.2019	

**Տ Ե Ղ Ե Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն Ն Ե Ր**  
**2019 թվականի փետրվար ամսվա համար**

**ԼՂՀ քաղաքաշինության նախարարություն**

NN	Լիցենզավորված, թույլտվություն, արտոնագիր ունեցող անձի		Լիցենզիայի սերիան և համարը	Լիցենզավորված գործունեության տեսակը	Լիցենզիայի վերաձևակերպում		Լիցենզիայի գործողության ժամկետի երկարաձգում (նշել երկարաձգված ժամանակահատվածի ավարտման ամսաթիվը)	Լիցենզիայի, թույլտվության արտոնագրի գործողության կասեցում		Լիցենզիայի գործունեությունը դադարեցնելու կամ թույլտվություն, արտոնագիրը չեղյալ համարվելու ամսաթիվը
	Անվանումը	ՀՎՀՀ			Որոշման ամսաթիվը	Նոր ամսվանումը		կասեցնող մասին որոշման կամ դեպքի ամսաթիվը	կասեցումը համեմատման որոշման ամսաթիվը	
1.	2.	3.	4.	5.	6.	7.	8.	9.	10.	11.
1	«ՄՈՆՈԼԻՏ» ՓԲԸ ք. Ստեփ. Գեներալ Իվանյանի 7	90020114	ՔՓՄ-430	Քաղաքաշինական փաստաթղթերի մշակում, ըստ հետևյալ ոլորտի՝ <i>հիդրոտեխնիկական</i>				27.02.2019		
2	«ԱՐՄԵՆ - ՇԻՆ» ՍՊԸ ք. Ստեփ. Զորգե փող. տուն 74	90029074	ՇԻ-636	Շինարարության իրականացում, ըստ հետևյալ ոլորտի՝ <i>բնակելի, հասարակական և արտադրական</i>				22.02.2019		
3	«ՇԻՆՍԵՐՎԻՍ» ՍՊԸ ք. Ստեփ., Հ. Սահյան 13	90031677	ՇԻ-768	Շինարարության իրականացում, ըստ հետևյալ ոլորտի՝ <i>բնակելի, հասարակական և արտադրական</i>				03.02.2019		
4			ՇԻ-815	Շինարարության իրականացում, ըստ հետևյալ ոլորտի՝ <i>էներգետիկ</i>				14.02.2019		
5	«ՄԱՔՍ-ՎՈՒՂ» ՍՊԸ ք. Ստեփ., Խանեն Բաղ տեղանաս	90013685	ՇԻ-774	Շինարարության իրականացում, ըստ հետևյալ ոլորտի՝ <i>բնակելի, հասարակական և արտադրական</i>				24.02.2019		
6	«ՄԻՔ - ՇԻՆ» ՍՊԸ ք. Ստեփ, Սասունցի Ղավթի փող. 60, բն. 21	90036481	ՇԻ-891	Շինարարության իրականացում, ըստ հետևյալ ոլորտի՝ <i>բնակելի, հասարակական և արտադրական</i>				13.02.2019		
7	«ՏՐԻՖՈՐԻՈՒՄ» ՍՊԸ ք. Ստեփ. Կամոյի 2-րդ նրբ.	90038186	ՔՓՄ-926	Քաղաքաշինական փաստաթղթերի մշակում, ըստ հետևյալ ոլորտի՝				05.02.2019		

	շ. 2 բն 1			<i>բնակելի, հասարակական և արտադրական</i>						
8	«ԹԻԷՄ ԲԻԼԴ» ՍՊԸ ք. Ստեփ., Վ Փափազյան 4	90040951	ՇԻ - 1010	Շինարարության իրականացում, ըստ հետևյալ ոլորտի՝ <i>բնակելի, հասարակական և արտադրական</i>				02.02.2019		
9	«ԷՅ-ՋԻ-ԷՅ» ՍՊԸ ք. Շուշի, փող. Ղազանչեցոց շ. 57/16	90343077	ՇԻ - 1011	Շինարարության իրականացում, ըստ հետևյալ ոլորտի՝ <i>բնակելի, հասարակական և արտադրական</i>				09.02.2019		
10	«ՍՈՒԽՆԻԴ» ՍՊԸ ք. Ստեփ., Ադմ. Իսակով շ. 2 <sup>բ</sup> , բն. 21	90037915	ՇԻ - 1015	Շինարարության իրականացում, ըստ հետևյալ ոլորտի՝ <i>հիդրոտեխնիկական</i>				23.02.2019		
11	«Դավիթ Սահակյան» ԱԶ ք. Ստեփ, Հեքիմյան փող., շենք 14ա/6	90468038	ՔՓՄ-963	Քաղաքաշինական փաստաթղթերի մշակում, ըստ հետևյալ ոլորտի՝ <i>բնակելի, հասարակական և արտադրական</i>					07.03.2019	
12	«ԱԹԱՅԱՆ» ՍՊԸ ԼՂՀ. Մարտունու շրջ., գ. Կարմիր Շուկա	90214748	ՇԻ-974	Շինարարության իրականացում, ըստ հետևյալ ոլորտի՝ <i>բնակելի, հասարակական և արտադրական</i>					17.05.2018	
13	«ԲՈՒՐԳ» ՍՊԸ ք. Ստեփ. Ա. Խաչատրյանի փող. N14	90022248	ՇԻ-589	Շինարարության իրականացում, ըստ հետևյալ ոլորտի՝ <i>հիդրոտեխնիկական</i>						08.02.2019 (դիմում առ 29.01.2019)
14	«ԿՈՆՏԱԿՏ» ՍՊԸ ք. Ստեփ. Հ. Հակոբյան 25	90010876	ՇԻ-961	Շինարարության իրականացում, ըստ հետևյալ ոլորտի՝ <i>կապի</i>						22.02.2019 (դիմում առ 20.02.2019)

